

1573

Shyur
Wurghy

809

5-48



172 007 2009

178

Թարգմանիչ
ԷՏԱՆ

ՏԻՊԱՐ ՄԱՐԴԻԿ

Բ.
ԿԵՕԹԷ
Կ Ա Մ

Handwritten mark

Ո՛Վ Է ԳՐԱԳԷՏԸ



Գ.
ՃԵՅՔՍԻՐ
Կ Ա Մ

Ո՛Վ Է ԲԱՆԱՍՏԵՂԸ



Կ. ՊՈՒՐՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՌՋՈՒՄԱՆ
1913

105


Հեղինակ
ՄՐԱԸՆ

809
5-48

0 2 JUN 2015
ԵՏԱՆ

ՏԻՊԱՐ ՄԱՐԴԻԿ

809



Բ.

ԿԵՕԹԷ

ԿԱՄ

Ո՛Վ Է ԳՐԱԳԷՏԸ



Գ.

ՃԵՅՔՍԻՐ

ԿԱՄ

Ո՛Վ Է ԲԱՆԱՍՏԵՂԸ



Կ. ԳՈՒԻՍ
1913

Д. Б. МКАН
Информаци



15 APR 2013

1543

Տ Ի Պ Ա Ր Մ Ա Ր Դ Ի Կ



Բ.

ԿԵՕԹԷ, ԿԱՄ ԳՐԱԳԷՏԸ

Աշխարհիկացիին մէջ նախահոգութիւն մը կը գտնուի գրագէտին (գրողին) կամ քարտուղարին համար, որուն պաշտօնն է տեղեկագրել ամէնուրեք բարախող և գործող կեանքին հրաշալի ոգիին արարքները: Իր գործն է իրողութիւններուն ընդունելութիւնը միաքին միջ, և յետոյ գերակշիռ և յատկանշական փորձառութիւններու ընտրութիւնը:

Բնութիւն, կ'ուզէ որ ինք տեղեկագրուի: Ի ոլոր իրերը խորամուխ եղած են իրենց պատմութիւնը գրելու: Մոլորակին, գայլախաղին ետեւէն կ'երթայ իր շուքը: Թաւալող ժայռը իր պատառները կը թողու յերան վրայ. գետը՝ իր ջրանցը հողին մէջ. կենդանին՝ իր ոսկորները խաւին մէջ, պտերն ու տերեւը՝ իրենց համեստ տապանագիրը հանքածուխին մէջ: Ինկող կաթիլը իր քանդակը կը դրոշմէ աւաղին կամ քարին մէջ: Ո՛չ մէկ ոտք կը քայլէ ձիւնին մէջ, կամ գեանին երկայնքը, առանց իր քալուածքին մէկ քարտէսը դրոշմելու աւելի կամ նուազ տեսական տառերով: Մարդուն մէն մի գործը ինքզինքը կ'արձանագրէ իր ընկերներուն յիշատակներուն, և իր սեփական կիրպերուն և երեսին մէջ: Օգը լեցուն է ձայներով. երկինք՝ նշաններով. գետինը ամբողջ յուշատետր և ստորագրութիւն է. և

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
№ 202



21883-59

6

Նմանողական արտայայտութեան այս նկրտումը, որուն ամէնուրեք կը հանդիպինք, բնութեան ձգտումին նշանն է. այլ լոկ սղագրութիւն է: Աւելի բարձր աստիճաններ կան, և Բնութիւնը աւելի պերճ օժտումներ ունի անոնց համար՝ զորս ինք կ'ընտրէ գերագոյն պաշտօնի մը. գիտնականներու կամ գրողներու դասակարգին համար, որոնք յարակցութիւն կը տեսնեն հոն ուր ռամիկը հատակտորներ կը տեսնէ, և որոնք կը մղուին իրողութիւնները ցուցադրել գաղափարային ձևով, և այսպէս հայթայթել առանցքը որուն վրայ կը դառնայ իրերուն կերտուածքը: Բնութիւնը կաթողին կը բաղձայ հայեցողական մարդուն կամ գիտունին կազմութեան: Անվրիպելի նպատակ մըն է այս, և իրերու սկզբնական կաղապարին մէջ պատրաստուած է: Գրագէտը թոյլատրելի կամ պատահական երեւոյթ մը չէ, այլ գործարանական ազդակ մը, թագաւորութեան նահանգներէն մին, հոգացուած և պատրաստուած, ի վաղնջուց և ի յաւիտենից, իրերու հանգոյցին և հիւստուածքին մէջ: Նախազգացումներ, ներքին մղումներ կը հրճուեցնեն գինքը: Տեսակ մը տաքութիւն կայ կուրծքին մէջ, որ հոգածու է նախնական ճշմարտութեան մը ըմբռնումին, որ հանքին մինչև ներքին մասը հոգեկան արևուն շողացումն է: Միտքին մէջ փայլատակող մէն մի խորհուրդ, իր բղխումի պահուն կը յայտնէ իր սեփական կարգը. ըլլայ ցնորք մը, կամ ըլլայ կատաղութիւն մը: Եթէ գրողը իր ներքին գրգռումները ունի, միւս կողմէն կայ հրաւէր և պէտք իր ձիրքին: Ընկերութիւնը, ամէն ժամանակներուն մէջ, միեւնոյն կարօտը ունի, այսինքն՝ առողջ մարդու մը՝ որ բաւարար կարողութիւն ունենայ արտայայտութեան, մտասեւեուումի իւրաքանչիւր առարկան իր բուն առնչութիւններուն

մէջ պահելու համար: Փառասէրն ու շահամոլը կը բերեն իրենց վերջին նոր ձաքուտքը, ըլլայ մաքսային սակացոյց, երկաթուղիներու ամերիկեան դրութեան արտառոց ծրագիր, կաթողիկոսութիւն, մէսմէրականութիւն, և առարկան իր առնչութիւններէն անջատելով՝ դիւրաւ կը յաջողին տեսցնելու զայն խիստ չլացիկ լոյսի մը մէջ, և խուժանը յիմարաբար կը դառնայ անոր շուրջը և չի դատապարտուիր կամ բուժուիր ներհակ խուժանէն, որ այս մասնաւոր խելագարութենէն հեռի կը պահէ ինքզինքը, այլ ուրիշ կեռի մը վրայ հաւասար յիմարութեամբ: Բայց ըմբռնող աչք ունենալու է մարդ, որ կարենայ այս առանձին հրէշութիւնը կրկին դետեղել իր բուն սահմանին և շրջանակին մէջ, — և ահա պատրանքը կը փարատի, և հասարակութեան խելքը գլուխը գալով՝ շնորհակալ կ'ըլլայ ազդարարին:

Գիտնականը դարերուն մարդն է, բայց պարտաւորուած է նաև փափաքիլ որ ուրիշ մարդոց պէս լաւ ապրի իր ժամանակակիցներուն հետ: Բայց թեթեւամիտ մարդիկ գրողներուն կամ գրագէտներուն վրայ տեսակ մը ծաղրանք կը նետեն, որ կարեւորութիւն չունենար եթէ գրողը ուշադիր է: Ամերիկայի մէջ խօսակցութիւնը իր զանազան ուռուցիկ ձևերով և հասարակաց կարծիքը կը գովին գործի մարդը, և հասարակութեան հաստատուն մասին անունը կը տրուի ամէն շրջանակի մէջ նշանակալից յարգանքով: Մեր ժողովուրդը Պոնաբարդին համակարծիք է ի մասին «գաղափարամոլ»-ներու: Գաղափարները ընկերային կարգին և հանգըստաւէտութեան խաղաղարիչ են, և վերջապէս անոնց տէրը կը խելագարեն: Կը կարծուի թէ գործնական և գովելի է Նիւ Յորքէն Իդմիր վաճառքներու բեռ մը յանձնարարելը, կամ հինգ-տասը հազար անիւնոց մանարան

մը բանեցնելու նպատակաւ ընկերութիւն մը հայթայթելու համար ասդին անդին վաղելը, կամ առեւտրական խումբի մը բանակցութիւնները և գեղացիներուն քուէները վստակելու համար անոնց ցաւերուն և դիւրութիւններուն վրայ ծրագիրներ պատրաստելը :

Եթէ շատ աւելի բարձր թոռիչքով գործ մը բաղդատութեան ղնէի հայեցողական կեանքի մը հետ, ինպասատալիին չէ որ պիտի համարձակէի վճիռ արձակել վստահութեամբ : Մարդկութիւնը ինքնահայեցութեան համար ա՛յնքան խորունկ բուն մը ունի որ ճշգնաւորը կամ վանականը շատ բաներ ունին ըսելիք ի պաշտպանութիւն իրենց խորհուրդի կամ աղօթքի կեանքին : Ամէն գործ կողմնակցութեան, յամառութեան և կշիռքի պակասութեան սակ մը ունի վճարելիք : Գործէ՛. եթէ կ'ախորժիս, — բայց ի վիսա քեզի կ'ընես : Մարդոց գործերը իրենց ուժին բաղդատմամբ չափազանց զօրաւոր են : Յոյց տուէ՛ք ինձի մարդ մը որ գործած ըլլայ, և իր գործին գերին եղած չըլլայ : Իրենց ըրածը կը մղէ և կը պարտաւորէ զիրենք նոյնը կրկին ընելու : Առաջին գործը, որ փորձ ըլլալու համար եղած էր, սրբազան խորհուրդ մը կը դառնայ : Կրակոտ բարեկարգիչը իր ըղձանքը կը մարմնադնէ ծէսի մը կամ ուխտի մը մէջ, և ինք ու իր բարեկամները կը կառչին ձեւին, և կը կորսնցնեն ըղձանքը, ձգտումը : Գուէյքըրը Գուէյքրութիւնը ստեղծած է, Շէյքըրը իր վանքն ու իր պարը հաստատած է, և թէեւ իւրաքանչիւրը բուն ոգիին խօսքը կ'ընէ, ոգի չկայ, այլ կըրկնում, որ ժխտումն է ոգիին : Բայց ո՛ւր են այսօրուան իր նոր բաները : Խանդավառ գործողութիւններուն մէջ կ'երեւնայ այս պակասը, բայց աւելի ստորին գործունէութիւններուն մէջ՝ որոնք մեզ աւելի հանգստաւէտ

և աւելի երկչոտ ընելէն ուրիշ բարձր նպատակ չունին, խորամանկ գործողութիւններու, գողութեան և ստուրթեան գործողութիւններու, հայեցողականը գործնական կարողութեանէն ամուսնալուծող և բանականութիւնն ու զգացումը տարագրող գործողութիւններուն մէջ վիսաէն և ուրացումէն զատ ուրիշ բան չկայ : Հնդիկները իրենց սուրբ գիրքերուն մէջ գրեցին. «Տղաքը միայն, և ոչ թէ ուսեալները, իրարմէ անջատ կ'ենթադրեն հայեցողական և գործնական կարողութիւնները : Անոնք մէ՛կ են միայն, որովհետեւ երկուքն ալ միեւնոյն նպատակը ձեռք կը բերեն, և մէկուն հետեւողներուն կողմէ շահուած տեղը միւսին հետեւողներուն կողմէ ալ կը շահուի : Այն մարդը միայն կը տեսնէ, որ կը տեսնէ թէ հայեցողական և գործնական վարդապետութիւնները մէկ են» : Որովհետեւ մեծ գործողութիւնը հոգեկան բնութեան վրայ կը ձեւուի : Գործի մը չափը զգացումն է որմէ կը ծագի ինք : Ամենամեծ գործը կրնայ դիւրաւ ամէնէն աւելի մասնաւոր պարագայէ մը բղխիլ :

Այս անջատումը վարիչներէն առաջ չի գար, այլ ստորին մարդոցմէ : Գործնական դասակարգին գլուխը կեցող կորովի մարդը մասնակից է ժամանակի զաղափարներուն, և մեծ համակրութիւն ունի հայեցողական դասակարգին հետ : Ո և է ընտիր մարդէ մը չի սպասուիր երկուքին այս անջատման : Այս կերպով Թալէրանի հարցումը միշտ ճիշտ է. «Մի՛ հարցնէք թէ հարո՞ւստ է. յանձնարարուա՞՞մ է, բարեմի՞տ է, ունի՞ այս կամ ա՛յն կարողութիւնը, օրուան շարժումին կը վերաբերի՞, մեր հաստատութիւնէն է. այլ հարցուցէ՛ք. Մէ՛կն է, բան մը կ'արժէ՞» : Այսպիսին ըստ իր տեսակին լաւ է : Այսպիսին կը փնտռեն Թալէյրան, բոլոր

պետութիւնը, մարդկութեան բոլոր հասարակաց ողջ-
մտութիւնը: Իրական և հիանալի եղիր, ո՛չ թէ մեր
գիտցածին այլ քու գիտցածիդ պէս: Կարող մարդիկ
հոգ չեն ընել թէ ի՛նչ տեսակով մարդ մը կարող է,
բաւական է որ կարող ըլլայ: Վարպետը վարպետէ կ'ա-
խորժի, և պայման չի դնել որ ան պերճախօս, արհես-
տագէտ կամ թագաւոր ըլլայ:

Ընկերութիւնը իրապէս զրագէտ դասակարգին բա-
րեկեցութենէն աւելի լուրջ շահ չունի:

Եւ պէտք չէ ուրացուի թէ մարդիկ անկեղծ են և
սրտագին, երբ կը ճանչնան և կ'ողջունեն մտաւորական
գործերը: Սակայն գրողը մեղի հետ աիրական գեանի
մը վրայ չի կենար: Կարծեմ թէ ասիկա իր իսկ յան-
ցանքն է: Ոսկին ոսկիի տեղ կ'անցնի: Ժամանակներ
եղած են երբ ան նուիրական անձ մըն էր. Ս. Գիրքեր
կը գրէր. առաջին օր՛ներգները. օրինագիրքերը, դիւ-
ցազներգութիւնները, թատերական երգերը. Սիբիլեան
տաղերը, Բաղդէական պատգամները, Լակոնական վճիռ-
ները, մահեանի պատերուն վրայ արձանագրուած: Մէն
մի բառ ճշմարիտ էր, և ազգերը նոր կեանքի կ'ար-
թընցնէր: Կը գրէր առանց թեթեւամտութեան, և
առանց ընտրութեան: Մէն մի բառ քանդակուած էր
իր աչքերուն առջեւ, հօղին և երկինքին մէջ. և արեւն
ու աստղերը միեւնոյն տարողութեամբ, և ոչ աւելի,
հարկաւոր գիրքեր էին միայն: Բայց ի՛նչպէս կրնայ
պատուուիլ անիկա, երբ ինքզինքը չի պատուեր. երբ
ինքզինքը կը կորսնցնէ խուժանին մէջ. երբ ո՛չ ևս
օրէնսդիրն է, այլ մակարոյժ մըն է, անխորհուրդ հան-
մօթ ջատագովութեամբ ոյժ կուտայ յօռի կառավարու-
թեան մը, կամ ամբողջ տարին կը հաջէ ընդգիմադիր

կողմին մէջ, կամ կը գրէ պայմանադրական քննադա-
տութիւն, կամ ճապաղ նորավէպեր, կամ, ամէն պա-
րագայի մէջ, կը գրէ առանց խորհուրդի, և առանց
գիշեր ցերեկ բուն ներշնչումի աղբիւրներուն դիմելու:

Այս հարցերէն պատասխան մը տալ կարելի է
ակնարկ մը նենկելով մեր դարուն գրական հանճարի
մարդոց ցանկին վրայ: Ասոնց մէջ ամէնէն հրահանգիչ
անունն է Կէօթէի անունը, որ կրնայ ներկայացուցիչ
ըլլալ գիտնականին կամ գրագէտին կարողութիւններուն
և պարտաւորութիւններուն:

Պոնարարդը նկարագրեցի իբրև ներկայացուցիչ մը
Ժ.Թ. դարու ժողովրդական արտաքին կեանքին և ձրգ-
տումներուն: Իր երկրորդ կէսը, իր բանաստեղծը, Կէօ-
թէն է, իր դարուն մէջ ըստ ամենայնի ընտանեցած
մարդ մը, որ անոր օգը կը շնչէ, անոր պտուղները կը
վայելէ, որ անկարելի պիտի ըլլար աւելի կանուխ ժա-
մանակի մը մէջ, և որ իր հակայական մասերով կը հե-
ռացնէ տկարութեան մեղադրանքը, որ, իրմէ զատ,
նոյն չրջանի մտաւորական գործերուն վրայ կը հանգչի:
Կ'երեւնայ ա՛յնպիսի ժամանակի մը մէջ երբ ընդհանուր
մշակում մը տարածուած էր, և բոլոր անհատական դի-
մագիծերը նուազած. երբ, ի բացակայութեան դիւցազ-
նական նկարագիրներու, ընկերային հանգստաւէտու-
թիւն մը և գործակցական դրութիւն մը եկած էր: Բա-
նաստեղծ չկար, այլ քսանեակներ բանաստեղծ գրողներու:
Փոլոմպոս չկար, այլ հարիւրաւոր նաւապետներ, հե-
ռադիտակով, ծանրաչափով. Դեմոսթենէս, Չաթամ չկա-
յին, այլ բաւական թիւով խորհրդարանական ճարտար
և մօլեկան պալքարողներ. մարգարէ կամ սուրբ չկար,
այլ ուսեալ ընկերութիւններ, աժան մամուլ մը, ընթեր-
ցարաններ, և զրադարաններ, անթիւ անհամար: Երբէք

իրողութիւններու ա՛յսքան խառնուրդ մը եղած չէր : Աշխարհը կ'ընդարձակուէր Ամբիկեան վաճառականութեան պէս : Կ'ըմբռնենք Յունական կամ Հռոմէական կեանքը—Միջին Դարու կեանքը—իրը պարզ և հասկնալի գործ . բայց արդի կեանքը ըմբռնելու համար հարկ է նկատի առնել բազմազան բաներ , ինչ որ նեղացուցիչ է :

Կէօթէ այս բազմազանութեան իմաստասէրն էր . հարիւրձեռնեան , արգոսակնեան , կարող և յաջողակ՝ իրողութիւններու և գիտութիւններու այս թաւալուն խառնուրդին հետ մրցելու , և իր բնական փոփոխ յարաշարժութեամբ անոնց հետ դիւրաւ զլուխ ելլելու . առնական միտք մը , կեանքին վրայ կեղև կապող պայմանադրական այլազան վերտերէն անշիփթ , իր նրբութեամբ հեշտիւ կարող՝ ծակելու այդ վերտերը , և իր ուժը քնութենէն քաղելու , որուն հետ լիուլի հաղորդութեան մէջ կ'ապրէր : Ինչ որ տարօրինակ է նաև , կ'ապրէր փոքր քաղաքի մը մէջ , մանր պետութեան մը մէջ , պարտուած պետութեան մը մէջ , և ա՛յնպիսի ժամանակ մը . երբ Գերմանիա ու է տուաշնորդող դեր չէր կատարեր աշխարհի դորձերուն մէջ հայրենի հպարտութեամբ մը իր զաւակներուն սիրտերը ուռեցնելու , պարագայ մը որ կրնար կազդուրել Ֆրանսական կամ Անգլիական , կամ ատենօք , Հռոմէական կամ Ատտիկեան հանճար մը : Այսու հանդերձ իր մուսային մէջ գաւառական սահմանափակումի հետք չկայ : Ան պարտական մը չէ իր դիրքին , այլ ծնաւ ազատ և հակակշռող հանճարով մը :

Էլէնան , կամ Փառութիւն երկրորդ մասը , բանաստեղծական հիւսուածքով զբականութեան իմաստասիրութիւն մըն է , իմաստասիրութիւն մը պատմութիւն-

ներու , դիցարանութիւններու , իմաստասիրութիւններու , գիտութիւններու և ազգային գրականութիւններու , ա՛յն համայնագիտական եղանակով՝ որով արդէ բազմամտութիւնը , ամբողջ աշխարհի ժողովուրդներուն միջազգային հաղորդակցութեամբ , կը խուզարկէ Հնդկական , Ետրոսքեան , և բովանդակ Կիկլոպեան արուեստները , երկրարանութիւնը , տարբաբանութիւնը , աստղարաշխութիւնը . այս թագաւորութիւններէն իւրաքանչիւրը կ'առնէ տեսակ մը օգային և քերթողական նկարագիր , բազմազանութեան իսկ պատճառաւ : Թագաւոր մը յարգանքով կը դիտուի . բայց եթէ պատահի որ մէկը ներկայ ըլլայ թագաւորներու վեհաժողովի մը , աչքը ազատութիւններ պիտի տայ իրեն՝ իւրաքանչիւրին մասնաւոր հանգամանքներուն համար : Խառնակ հրաշալի երգեր չեն , այլ նախապատրաստուած ձեւեր , որոնց գննութեան ութսուն տարիներ նուիրած է բանաստեղծը : Այս անդրադարձ և քննադատական իմաստասիրութեամբ իսկ քերթուածը իր ժամանակին ծաղիկը կ'ըլլայ իրաւամբ : Իր թուականը իրմով կ'ըսուկուի : Բայց տակաւին բանաստեղծ է , — բանաստեղծ , ու է ժամանակակիցէ մը աւելի հպարտ դափնիով , ու մանրադիտակներու այն տանջանքին տակ (որովհետև կարծես ան իր մորթին մէն մի ծակէն կը տեսնէ) քնարին թելը կը զարնէ հերոսի մը ուժով և վայելչութեամբ :

Գրքին սքանչելիքն է անոր վեհ իմացականութիւնը : Այս մարդուն խելքին լուծիչ հեղուկին մէջ , անցեալ և ներկայ դարերը , և անոնց կրօնքները , քաղաքականութիւնները , և խորհելու եղանակները , արհիտիպարներու և գաղափարներու կը փոխարկուին : Ինչ նոր դիցարանութիւններ կը նաւեն անոր գլխուն մէջէն : Յոյները կ'ըսէին թէ Աղեքսանդր մինչև Բատս գնաց . Կէօթէ ,

դեռ անցեալ օր, մինչեւ հոն գնաց. և քայլ մըն ալ աւելի յանդգնեցաւ և ինքզինքը ողջ առողջ ետ բերաւ :
 Մրտազուարճ ազատութիւն մը կայ իր վերացակա- նութեան մէջ : Մեզի հետ ճամբայ ելող անհուն հորի- զոնը իր վեհութիւնը փոխ կուտայ դուզնաքեայ իրերու, և հարկաւոր ու պայմանադրական նիւթերու, իրրե հանգիստերու և տօնական ներկայացումներու : Իր դա- րուն հոգին էր : Եթէ այդ դարը զիտնական մը ըլլար, և ժողովուրդով, սերտ կազմակերպութեամբ, և մասե- ըու մարզանքով մեծ Խուզարկու Արշաւախումբի մը վերածուէր, կուտակելով իրողութիւններու և պը- տուղներու ա՛յնպիսի յղիութիւն մը զոր վերջէն եկող ոչ մէկ գիտուն կարենար դասակարգել, այս մարդուն միտքը լեցուն սենեակներ ունէր ամէնուն ալ բաշխումին համար : Կարողութիւն մը ունէր անջատ հիւլէները միացնելու դարձեալ իրենց սեփական օրէնքով : Մեր արդի գոյութիւնը զգեստաւորեց բանաստեղծութեամբ : Փոքրութիւններու և մանրամասնութիւններու մէջէն բռնեց կեանքի Ոգին, հնօրեայ խորամանկ Պրոտէստը, որ մեր մօտիկը բոյն դրած էր, և ցոյց տուաւ թէ մեր կողմէ դարուն վերագրուած անտարբերութիւնը և ար- ձակը անոր զիմակներէն մէկն էր միայն. — «Իր փախուստն իսկ ներկայութիւն է ծպտուած», թէ զարդի համազ- գեստը հանած է յոգնութիւն առնելու հագուստի մը համար, և նշանախեց մը իսկ նուազ առողջ կամ փայ- թամ չէր Լիվրբուլի կամ Լահէյի մէջ, ինչպէս ատենօք Հոռմի կամ Անտիոքի մէջ : Կէօթէ այդ Ոգի կը փնտռէր հրապարակներուն և գլխաւոր փողոցներուն, պողոտաներուն և պանդոկներուն մէջ, և սովորամոլու- թեան ու զգայութեանց ամէնէն ամուր թագաւորու- թեան մէջ, ցոյց տուաւ լրտեսող դիւային կարողու-

թիւնը. թէ սովորական գործերու մէջ դիցարանութեան և առասպելի թել մը կը մանուի, և ասիկա ըրաւ՝ գծելով մէն մի սովորութեան, և բարքի, մէն մի հաստատու- թեան, գործիքի և միջոցի սերնդածառը, իր ծագմամբը մարդուն կազմուածքին մէջ կայուն : Վարկածի և հռե- տորութեան դէմ ծայրայեղ զայրոյթ մը ունէր. «Ես բաւական գիտեմ իմ իսկ անձէս առնելով. երբ մարդ մը գիրք մը գրէ, թո՛ղ գիտցածը միայն պարզէ՛» : Ամէնէն պարզ և ցած շեշտով կը գրէ, գրածէն շատ աւելին զանց ընելով, և միշտ բառի տեղ բան մը դը- նելով : Հին և արդի ոգիին ու արուեստին միջև տար- բերութիւնը բացատրեց : Սահմանեց արուեստը, անոր շրջանակը և օրէնքները : Երբեք ըսուած ամէնէն լաւ բաները ըսաւ բնութեան մասին : Բնութեան հետ կը վարուի հին իմաստասէրներուն պէս, ինչպէս վարուե- ցան եօթը իմաստունները, — և Ֆրանսացիք ի՛նչ ալ ըսեն անոնց անջատումին վրայ, բանաստեղծութիւնը և մարդկայնութիւնը կը մնան մեզի և տեսակ մը վար- դապետական արուեստ ունին : Աչքերը, վերջապէս, հեռագլխակներէն և մանրադիտակներէն լաւագոյն են : Կէօթէ բանալի յարմարցուց բնութեան շատ մը մասե- ըուն, իր մտքին մէջ միութեան և պարզութեան հազ- ուագիւտ կարգին շնորհիւ : Այսպէս ան թելադրեց արդի բուսաբանութեան վարիչ գաղափարը, թէ տերեւ մը, կամ տերեւի մը աչքը, բուսաբանութեան միատարրն է, թէ տունկին մէն մի մասը այլափոխուած տերեւ մըն է միայն՝ նոր պայմանի մը վիճակելու. և պայմանները զանազանելով, տերեւ մը կրնայ ուրիշ ո և է գործարանի մը փոխարկուիլ, և ուրիշ ո և է գործարան տերեւի մը : Նմանապէս, հիւսուածաբանութեան մէջ, ենթադրեց թէ ողնաշարին մէկ ողնը կրնայ նկատուիլ կմախքին

միատարրը . գլուխը այլաձևուած ամէնէն վերի ողն էր միայն : «Տունկը կոճակէ կոճակ կ'երթայ, ի վերջոյ ամփոփուելով ծաղիկի և սերմի : Այսպէս որդը, թրթուրը կոճակէ կոճակ կ'երթայ, և գլուխի կը յանգի : Մարդը և բարձր կարգի կենդանիները ողններու միջոցաւ շինուած են, կարողութիւնները կեդրոնացած ըլլալով գլխուն մէջ :» Տեսարանութեան մէջ, դարձեալ, հերքեց եօթը գոյներու արուեստական վարդապետութիւնը, և նկատեց թէ մէն մի գոյն լոյսի և խաւարի խառնուրդն էր նոր համեմատութիւններով : Իրօք կարեւորը այն չէ թէ ինչ նիւթերու վրայ կը գրէ : Կը տեսնէ ամէն ծակէ, և տեսակ մը թաւալում ունի դէպի ճշմարտութիւն : Ըսածնիդ պիտի իրականացնէ : Կ'ատէ խարուիլը, և պառաւական զրոյցներ կրկնելը, որոնք հազարաւոր տարիներէ ի վեր տիրած են մարդոց հաւատքին : Կրնայ պառաւի զրոյց ալ ըսել եթէ միւս ըսածներուն չափ ճշմարիտ է : Կը մաղէ : Ես հոս եմ, պիտի ըսէ, այդ բաներուն չափն ու դատաւորը ըլլալու : Ինչո՞ւ ուրիշին ըսածին վրայ ընդունիմ զանոնք : Եւ, հետեւաբար, ինչ որ կ'ըսէ կրօնքի, կիրքի, ամուսնութեան, կենցաղավարութեան, սեփականութեան, թրղթադրամի, հաւատքի շրջաններու, կախարդական նշաններու, բախտի վրայ, կամ ուրիշ ինչ բանի վրայ որ ըլլայ, մոռցուելիք բաներ չեն :

Ժողովրդական մէն մի խօսք ճշգրտելու ձգտումին մասին ամէնէն նշանաւոր օրինակը առէ՛ք : Սատանան կարեւոր դեր մը խաղացած է ամէն փամանակ դիցաբանութեան մէջ : Կէօթէ չէր ուզեր որ բառի մը տակ բան մը չծածկուի : Միեւնոյն չափը դարձեալ պիտի գործածուի . «Երբէք չեմ լսած ոճիր մը զոր ես ալ չկարենայի գործել» : Ուստի այդ ճիւղին կո-

կորդին կը փակչի : Ան իրական պէտք է ըլլայ . ան արդիական պէտք է ըլլայ . ան Եւրոպական պէտք է ըլլայ . ան ազնուականի մը պէս պէտք է հագուի և բարեձևութիւնը ընդունի, և փողոցներուն մէջ քայլէ, և իրազեկ ըլլայ Վիեննայի, Հայտէլպէրկի կեանքին, 1820ին — ապա թէ քիչ պէտք չէ գոյութիւն ունենայ : Ըստ այսմ, մերկացուց զայն դիցարանական հագուատէն, կոտոշներէն, երկձիղ ոտքերէն, կարթածեւ պոչէն, ծծումքէն, գեղեցիկէն, և փոխանակ զիրքերուն և պատկերներուն մէջ նայելու, փնտռեց զայն իր իսկ մտքին մէջ, պաղարիւնութեան, անձնապաշտութեան, անհաւատութեան մէն մի ստուերին մէջ, որ մարդկային խորհուրդը կը մթացնէ խուժանին կամ առանձնութեան մէջ, և տեսաւ որ պատկերը իրականութիւն և սարսափ կը շահէր իր ըրած յաւելումներովն ու յապաւումներովը : Տեսաւ որ այս ճիւղին իսկութիւնը, որ ստուերին մէջ կը դեպերէր մարդոց բնակարաններուն շուրջ, մարդոց ստեղծուելէն ի վեր, պարզ մտքի ըմբռնում մըն էր, զգայարաններու ծառայութեան յատկացուած, — ինչպէս արդէն այս ձգտումը կայ միշտ . և գրականութեան, իր Մեֆիսթօֆէլէսին մէջ նետեց առաջին գործարանական դէմքը՝ որ երբեք աւելցաւ քանի մը դարերէ ի վեր, և որ պիտի մնայ Պրոմէթէոսին չափ երկար տեսն :

Նպատակ չունիմ իր բազմաթիւ գործերուն վերլուծման մէջ մտնելու : Կը բազմանան թարգմանութիւններէ, քննադատութիւններէ, առամներէ, քնարերգական և ամէն տեսակ ուրիշ քերթողական նկարագրութիւններէ, գրական օրագրութիւններէ, և ակնասաւոր անձերու կենդանագրերէ : Բայց չեմ կրնար խօսել իր իրական վիճակի մասին : Մայսթրըրի մասնաւոր յիշատակութիւնը :



Վերհէլմ Մայսթըրը վէպ մըն է ամէն իմաստով, իր տեսակին առաջինը, իր սքանչացողներուն կողմէ արդի ընկերութեան միակ նկարագրութիւնը կոչուած, — որպէս թէ ուրիշ վէպեր, Սքոթին վէպերը, զոր օրինակ, կը զբաղին ընկերութեան տարազին և պայմաններուն վրայ, իսկ ասիկա՝ կեանքի ոգիին վրայ: Գիրք մըն է որուն վերեւ դեռ տեսակ մը քօղ քաշուած է: Յոյժ խելացի անձեր զարմանքով և հրճուանքով կը կարդան զայն: Այսպիսիներէն ոմանք կը նախընտրեն զայն Համլէթէն, իբրեւ հանճարի գործ: Կ'ենթադրեմ թէ այս գարուս մէջ ո՛չ մէկ գիրք կրնայ անոր հետ բազդատուի իր համեղ քաղցրութեամբը, մտքին համար ա՛յնքան նոր և ակտրօթագրգիւ, գարգեւելով անոր ա՛յնքան հաստատուն խորհուրդներ, ճշգրիտ ներքնահայեցողութիւններ կեանքին, կենցաղավարութեան և բարքերու մէջ, ա՛յնքան լաւ ակնարկութիւններ կեանքի ընթացքին վրայ, ա՛յնքան անակնկալ ցլմունքներ գէպի բարձրագոյն շրջանակ մը, և առանց հետորական կամ բուժ հետքի մը: Հանճարեղ երիտասարդներու հետաքրքրութիւնը շարժող գիրք մը, բայց խիստ անգոհացուցիչ: Թեթեւ ընթերցումի սիրահարներ, անոնք որ անոր մէջ պարզ վէպերէ իրենց առած զբօսանքը կը վնասեն, յուսախաբ կ'ըլլան: Ընդհակառակն անոնք որ կը սկսին իբրեւ հանճարի արժանաւոր պատմութիւն մը, և հանճարին տաժանմունքներուն և ժխտումներուն արուելիք դափնիին արդար վճիռը զայն կարգալու վե՛հ յուսով, անոնք ալ արանջալու իրաւունք ունին: Անգլիոյ մէջ վէպ մը ունէինք, որ նպատակ ունէր նոր դարու մը յոյսը մարմնացնելու, և «Երիտասարդ Անգլիա» կոչուած կուսակցութեան քաղաքական յոյսը պարզելու, որուն մէջ առաքինութեան միակ

վարձքը ակտու մըն է Խորհրդարանին մէջ, և լոյստութիւն մը: Կէօթէի վէպին եզրակացութիւնն ալ նոյնքան կազ է և անբարոյական: Ժօռօ Սան՝ Գօնսփիւէլոյին և անոր շարունակութեան մէջ, աւելի ճշմարիտ և աւելի արժանաւոր պատկեր մը դժած է: Վէպին ընթացքին մէջ հերոսին և հերոսուհիին բարքերը կ'ընդարձակուին ա՛յնպիսի չափով մը որ ազնուապետական արուեստակեալ կեանքին յախճապակեայ խաղասեղանը կը դողայնէ. կը թողուն ընկերութիւնը և իրենց աստիճանին ունակութիւնները, իրենց հարբատութիւնը կը կորսնցնեն, մեծ դաղափարներու, և ընկերային ամենալսեմ նպատակի ծառաներ կ'ըլլան. մինչեւ որ վերջապէս հերոսը, որ մարդկային ցեղին յոյժ ազնիւ օգուաներ մատուցանելու համար կազմուած ընկերակցութեան մը կեղրոնը և աղբիւրն է, այլեւ պատասխան չի տար իր սեփական տիտղոսով իր անունը տուողներուն. այդ տիտղոսը օտար և հեռու որ կ'երեւայ իր ականջին: «Ես պարզ մարդ եմ», կ'ըսէ, «մարդուն համար կը շնչեմ և կ'աշխատիմ», և ասիկա՝ ազքատութեան և ծայրագոյն զոհողութիւններու մէջ: Կէօթէի հերոսը, ընդհակառակն, ա՛յնքան ակարութիւններ և անմաքրութիւններ ունի, և ա՛յնքան գէշ ընկերներու հետ կ'ապրի, որ անգլիացի ժուժկալ հանրութիւնը, երբ գիրքը թարգմանուեցաւ, զգուանք զգաց: Եւ սակայն ա՛յնքան լեցուն է իմաստութեամբ, աշխարհամանօթութեամբ և օրէնքներու ծանօթութեամբ, անձերը ա՛յնքան ճիշդ և ա՛յնքան նրբօրէն պատկերացուած, և ա՛յնքան քիչ խղանքներով և ո՛չ մէկ աւելորդ բառով, գիրքը ա՛յնքան նոր և անսպասելի կը մնայ միշտ, որ կը պարտաւորուինք թողուլ զայն որ շարունակէ իր ճամբան, և կրցածնու չափ

բութիւնները անբաւական են: Այդ պատգամը պիտի գտնէ մէթոտ և պատկերացում, յօգաւորում և ներդաշնակութիւն: Ինք համբ ալ ըլլար, պատգամը պիտի խօսէր: Եթէ ոչ, — եթէ այդպիսի Աստուծոյ մը բառը չկայ մարդուն մէջ, — մեղի ի՞նչ փոյթ թէ ո՞րքան ճարտար, ո՞րքան դիւրասահ, ո՞րքան փայլուն է ան:

Ո և է վճիռի մը ուժին համար մեծ կարեւորութիւն ունի գիտնալը թէ անոր ետեւը մարդ կա՞յ թէ ոչ: Մասնագիտական թերթին, ազդեցիկ օրագրին մէջ կերպարանք չեմ որոներ. այլ միայն անպատասխանատու ստուեր մը, յոճախ դրամի վրայ հիմնուած ընկերակցութիւն մը, կամ թեթեւաբարոյ մը, որ, իր պարբերութեանց դիմակին և վերարկուներուն տակ, կը յուսայ որոշ մէկու մը տեղ անցնիլ: Բայց ուզի՞ր գրքի մը մէջ մի հատուածին և խօսքի մէջ մի մասի մէջէն կը հանդիպիմ մարդու ամենակտրուկ դէմքի մը. իր ոյժն ու սարսափը կ'ողողեն մէջ մի բառ. ստորակէտները և վերջակէտները կենդանի են, ա՛յնպէս որ գրութիւնը ըմբշական է և թեթեւաշարժ, — կրնայ հեռուն երթալ և երկար ապրիլ:

Անգլիոյ և Ամերիկայի մէջ, մէկը կրնա՞ հետեւող մը ըլլալ Յօյն կամ Լատին բանաստեղծի մը գրութիւններուն, առանց քերթողական հուրի կամ ճաշակի: Մարդ մը Պլատոնի կամ Պրոկլոսի վրայ տարիներ վատնելուն համար չի կրնար յաւակնիլ թէ հերոսական կարծիքներու տէր է, կամ թէ իր քաղաքին սովորութիւնները կրնայ այգանել: Բայց գերմանական ազգը այս նիւթերուն վրայ խիստ հեգնական միամտութիւն մը ունի. ուսանողը, ընթերցասրահէն դուրս, տակաւին կը թխտէ դասերուն վրայ. և ուսուցիչը չի կրնար պրծիլ սա՛ յաւակնութենէն, թէ իմաստասիրութեան ճշմար-

տութիւնները քիչ շատ կրնան կիրարկուիլ Պերլինի և Միւնխիսի: Այս ծայրայեղ ինքնահաւանութիւնը կը կարողայնէ դանոնք շատ աւելի տաղանդաւոր մարդիկը անտես ընելու: Այս է պատճառը որ Գերմանիայէն պատուաստուած են մեղի բարձր խօսակցութիւններու մէջ ընթացիկ եզոզ գրեթէ բոլոր արժէքաւոր վերացումները: Բայց մինչ Անգլիոյ և Ֆրանսայի մէջ, խելքով և ուսումով ականաւոր մարդիկ տեսակ մը թեթեւութեամբ կ'որդեգրեն իրենց ուսումնասիրութիւնը և իրենց մասնագիտութիւնը, և նկարագրի պատճառներով՝ խորապէս չեն մղուիր իրենց իւրացուցած նիւթին կամ դերին, — կէօթէ, Գերման ազգին գլուխն ու մարմինը, տաղանդէն չի խօսիր, այլ ճշմարտութիւնը մէջէն կը շողայ: շատ իմաստուն է, թէեւ իր տաղանդը յաճախ իր իմաստութիւնը կը քօղարկէ: Իր խօսքը ո՞րքան որ պատուական է, աւելի լաւ բան մը ունի մտքին մէջ: Հետաքրքրութիւնս կ'արթնցնէ: Անկիտ անկախութիւն մը ունի որ ճշմարտութեան հետ գլուխ գլխի խօսակցելէն առաջ կուգայ. մտիկ ըրէ՛, կամ մերժէ՛, իրողութիւնը իրողութիւն է. և գրողին նկատմամբ քու հետաքրքրութիւնդ անոր պատմուածքին չի սահմանափակուիր, և քու յիշողութենէդ կ'առնէ կը քալէ, իր գործը պատուաւորապէս կատարելէն վերջ, ինչպէս հացագործը՝ հացը տունը ձգելէն վերջ. բայց անոր գործը իր նուազագոյն մասն է: Աշխարհը շինող հին Յուստենական Հանճարը ինքզինքը աւելի յաճած է այս մարդուն քան ու է ուրիշի: Չեմ համարձակիր ըսել թէ կէօթէ բարձրացած է ամենավերին սահմանը ուրիշը հանճարը խօսած է: Չէ պաշտած ան ամենաբարձր միութիւնը. անկարող է ինքնամոռաց անձնատուր ըլլալու բարոյական զգացումին: Իր հնչեցուցած-

ներէն աւելի ազնիւ յարեր կան բանաստեղծութեան մէջ : Գրողներ կան՝ տաղանդով աւելի ազգատ, բայց որոնց չե՛յոր աւելի մաքուր է, և աւելի կը յուզէ սիրտը : Կէօթէ չի կրնար երբեք սիրելի ըլլալ մարդոց : Իրենը անձնութիւնն ալ չէ զուտ ճշմարտութեան . այլ բարեկրթութեան պատճառաւ ճշմարտութեան : Տիեզերական բնութեան, տիեզերական ճշմարտութեան նուաճումէն նուազ ընդարձակ նպատակ չունի . կ'ուզէ որ ան ըլլայ իր բաժին . մարդ մը որ չկաշառուի, չխարուի, ոչ ալ անարեկուի, ստոյիկեան ինքնազսպումով և անձնուրացումով, և բոլոր մարդոց համար մէկ կ'չիւքով, — «Ի՛նչ կրնաք սովորեցնել ինձի» : Իրեն համար բոլոր ստացումներու արժէքը տսով միայն կը չափուի . աստիճան, առանձնաշնորհումներ, առողջութիւն, ժամանակ, ինքնագոյտ թիւն :

Տիպար է մշակոյթի, սիրող հաւօրէն արուեստներու, և գիտութիւններու, և գէպքերու . զեղարուեստական . բայց ո՛չ զեղարուեստագէտ . հոգեկան, բայց ոչ հոգեպաշտ : Չկայ բան մը զոր զիանալու իրաւունք չունենար . տիեզերական հանճարին զինարանին մէջ չկայ զբան մը զոր ձեռքին մէջ առած չըլլար, բայց սա՛ կարուկ զգուշութեամբ որ իր գործիքները երբեք չլնասեն իրեն : Լոյսի ճառագայթ մը կը գնէ մէն մի իրողութեան ետեւ, և իրեն ու իր ամենասիրելի սեփականութեան միջեւ : Իրմէ բան մը ծածկուած չէր, ոչինչ քողարկուած : Ծակամուտ սատանաները քովիկը նստան, և նաև սատանաները տեսնող սուրբը . և բնազանցական տարրերը կերպարանք առին : «Բարեպաշտութիւնը ինքնին նպատակ չէ, այլ միջոց մը միայն, որով, ներքին անխառն խաղաղութեան շնորհիւ, կրնանք ամենաբարձր մշակութեան հասնիլ» : Եւ գեղեցիկ արուեստներուն մէջ

մի գաղանիքին իր թափանցումը կէօթէն միշտ աւելի արձանական պիտի ընէ : Իր սէրերը կ'օգնեն իրեն, ինչ, պէս կիկերոնի կողմէ գործածուած կիկերը դաւադիրներուն գաղանիքը երեւան հանելու համար : Բնաւ ու է թշնամութիւն չունի : Դուն կրնաս իրեն թշնամի ըլլալ, — եթէ այս կերպով բան մը պիտի հասկցնես իրեն՝ ինչ որ բարեացակամութեամբք չես կրնար, — ասով ալ սակայն կործանումիդ նոր փորձառութիւնը պիտի ունենաս : Ան չի կրնար ատել ոչ զոք . իր ժամանակը շատ թանկագին է : Ստանուածքի հակառակութիւններ կրնան հանդուրժելի ըլլալ, բայց կայսերու ատելութեանց նման, որոնք պատկառանքով կը կռուին թագաւորութիւններու վրայ :

Իր ինքնակենսագրութիւնը, «Բանաստեղծութիւն և ճշմարտութիւն՝ իմ կեանքէս քաղուած» տիտղոսին տակ, արտայայտութիւնն է սա՛ գաղափարին — որ հիմա աշխարհին ընտանի է գերման մտքին շնորհիւ, «Ո՛ր նորութիւն մը Անգլիոյ, Հին ու Նոր Անգլիոյ, երբ այդ գիրքը երեցաւ, — թէ մարդ մը գոյութիւն ունի մշակուելու համար, ո՛չ թէ այն բանին մէջ զոր կրնայ կատարել, այլ ա՛յն բանին համար որ կրնայ կատարուիլ իրեն մէջ : Մարդու վրայ իրերու հակազդեցութիւնը միակ գիտելի արդիւնքն է : Իմացական մարդ մը կրնայ ինքզինքը տեսնել իրբեւ երրորդ անձ մը . հետեւաբար իր թերութիւնները և իր պատրանքները կը շահագրգռեն զինքը հաւասարապէս իր յաջողութիւններուն հետ : Թէև կը փափաքի բարգաւաճիլ գործնականին մէջ, այլ աւելի կը փափաքի ճանչնալ մարդուն շատմութիւնը և ճակատագիրը, մինչ իրեն շուրջ պատու անձնասէրներու ամպերը ստորին յաջողութեան մը միայն կը շահագրգռուին :

Այս գաղափարը կը թագաւորէ «Բանաստեղծութեան և ճշմարտութեան» մէջ, և կ'ուզուի պատահարներուն ընտրութիւնը, և ո՛չ թէ դէպքերուն արտաքին կարեւորութիւնը, անձերուն աստիճանը, կամ եկամուտներուն գումարը: Անշուշտ գիրքը «Կէօթէի Կեանք»ը հաշուելու չափ կարեւոր նիւթեր չի հայթայթեր մեզի. — թուականները քիչ, առանց թղթակցութեան, առանց պաշտօնի կամ գործի մանրամասնութեանց, առանց օ և է լոյսի իր ամուսնութեան վրայ, և լուութեան մէջ թաղուած է տասը տարուան շրջան մը, իր կեանքին ամէնէն գործօն մասը՝ իր Վայմար հաստատուելէն վերջ: Այսու հանդերձ, քանի մը սիրային գործեր, որոնք բանի մը չյանգեցան, ինչպէս ռամիկը կ'ըսէ, տարօրինակ կարեւորութիւն ունին. այս մասին մանր պարագաներով կը խճողէ մեզ. — ինչ ինչ արտաուոց կարծիքներ. իր սեփական գիւտը եղող աշխարհածնական դրութիւններ և կրօնքներ, և մասնաւորապէս իր յարաբերութիւնները ականաւոր մտքերու հետ, և խորհուրդի տազնապալից շրջաններու հետ. — ասոց վրայ կ'ընդլայնէ: Իր «Օրական և Տարեկան Օրագրութիւնը», իր «Խտալական Ուղեւորութիւնները», իր «Պրանսա գիւլագնացութիւնը», և իր «Գոյներու Տեսութեան» պատմական մասը միեւնոյն շահեկանութիւնը ունին: Վերջինին մէջ արագօրէն կը յիշատակէ Քէյրէրը, Բօճըր Պէյքընը, Գալլիէոսը, Նևտոնը, Վօլթէպը ևն. և զբքին այս մասին հրապօրը կը կայանայ Եւրոպայի գիտական պատմութեան այս վեհապետներուն և իրեն միջեւ յարաբերութեան ամենապարզ յայտարարութեան մէջ:

Արուեստի այս օրէնսդիրը արուեստագէտ չէ: Արդեօք անո՞ր համար որ չափազանց շատ գիտէր, իր տեսութիւնը մանրադննական էր, և ճիշտ հեռանկարին,

ամբողջին տեսութեան հետ մանուած: Կոտորակաւոր է պատահական քերթուածներու և վճիռ խօսքերու հանրագիտակի մը գրողը: Երբ կը նստի տուամ մը, կամ վէպ գրելու, իր զննութիւնները կը հաւաքէ և կը դասաւորէ հարիւրաւոր կողմերէ, և կրցածին չափ կը յարմարցնէ մարմինին: Մեծ մաս մը կը մերժէ դասաւորուելը. Կէօթէ թուլակի կ'աւելցնէ այդ մասը. մեծ մաս մըն ալ բացը կը թողու տեղ չգտնելով: Կազմարարը միայն կրնայ կապակցութիւն մը տալ անոնց, և ա՛յս է պատճառը որ իր գործերէն շատերուն անկապուծեանէն զատ, հատորներով անջատ պարբերութիւններ, «արտաքիններ» ևն. ունինք:

Կ'ենթադրեմ թէ իր զրոյցներուն աշխարհիկ շեշտը աճեցաւ ինքնամշակոյթի հաշիւներէն: Ասիկա տկարութիւնն էր զարմանալի գիտնականի մը՝ որ աշխարհը սիրեց երախտագիտութեան պատճառաւ, որ՝ ճանչցաւ թէ ո՛ւր պէտք էին գտնուիլ մատենադարաններ, պատկերներու սրահներ, ճարտարապետութիւն, աշխատանոցներ, գիտուններ և պարագոյ ժամեր, և որ չվատանցաւ աղքատութեան և մերկութեան փոխարինութիւններուն: Սովորատ սիրեց Աթենքը. Մօնթէյնը՝ Բարիզը, և Տիկին տը Սթալ ըսաւ թէ այդ կողմէն (այսինքն՝ Բարիզի) միայն վիրաւորելի էր ինքը: Ան ունի իր նպաստաւոր տեսարանը: Բո՞որ հանճարները սովորաբար վատարխտ են և հիւանդկախ, ա՛յնպէս որ կը փախաքի մարդ զանոնք ուրիշ տեղ հաստատուած տեսնել: Շատ քիչ անգամ կը տեսնենք որ մարդ անհանգիստ կամ ապրիլէն վախցող չըլլայ: Ամօթի թեթև չիկնութիւն մը կայ բարի մարդոց և ձգտումներ ունեցող մարդոց այսին վրայ, և ծագրանկարի համեմք մը: Բայց այս մարդը բոլորովին երջանիկ էր իր դարուն և աշ-

խարհին մէջ: Ո՛չ ոք իրեն չափ յարմարութիւն ունէր ապրելու, կամ աւելի սրտագինս կը վայելէր խաղը: Իր գործերուն ոգին եղող մշակութեան այս ձգտումին մէջ կը կայանայ իր կարողութիւնը: Բացարձակ, յաւելեանական ճշմարտութեան զաղափարը բարձր է, առանց ակնարկելու թէ անով ես ալ կ'ընդարձակուիմ: Բանաստեղծական ներշնչումի հեղեղին անոր անձնատուութիւնը բարձր է, բայց Անգլիոյ և Ամերիկայի մէջ գիրք գըրուելու շարժառիթներուն հետ բաղդատելով, բուն իսկ ճշմարտութիւնն է այս, և ունի ներշնչելու կարողութիւնը՝ որ ճշմարտութեան կը պատկանի: Այսպէս Կէօթէ գրքին վերադարձուց անոր վաղեմի ուժին և պատկառանքին մէկ մասը:

Կէօթէ, յոյժ քաղաքակիրթ ժամանակի մը և երկրի մը մէջ գալով, երբ ինքնագրոշմ տաղանդը կը ճնշուէր գիրքերու և մեքենական օժանդակներու, և պահանջկոտներու նեղացուցիչ այլազանութեան բեռան տակ, կր սովորեցնէր մարդոց այս լեռնաբերձ խառնակոյտին հետ զլուխ ելլելու և զայն երկրորդական ընելու կերպը: Նաբոլէոնը իրեն հետ կը կցեմ, որովհետեւ երկուքն ալ արուեստականութեանց ճշնումին դէմ բնութեան զայրոյթին և հակազդեցութեան ներկայացուցիչներն են, — երկու կորովի իրապաշտներ, որոնք իրենց գիտնականներուն հետ քանիցս տապալը դրին ցուցամոլութեան և կեղծիքի ծառին արմատին, այս ժամանակին և բոլոր ժամանակին համար: Այս զուարթ վատակաւորը, առանց արտաքին ժողովրդականութեան կամ գրգռումի, իր իսկ կուրծքէն քաղելով իր շարժառիթն ու իր յատակագիծը, անթացուպերով ճգնեցաւ հսկայի մը բարձրութեան, և անդուլ անդադար, իր հետապնդումներուն փոփոխ հանգամանքը միայն ի բաց

առեալ, ութսուն տարիներ աշխատեցաւ իր նախընծայ եռանդին յարմառութեամբ:

Արդի գիտութեան վերջին դասը ա՛յն է թէ կազմուածքի ամենաբարձր պարզութիւնը առաջ կը բերուի մ'չ թէ սակաւաթիւ տարրերով, այլ ամենաբարձր բարդութեամբ: Մարդը բոլոր արարածներուն ամէնէն բարդն է: Պէտք է սորվինք շատոյթ և եկամուտ քաղել հին ու արդի դարերուն անհուն ժառանգութենէն: Կէօթէ քաջութիւն կը վարդապատէ, և ամէն ժամանակներու համարժէքութիւնը. թէ ու է դարագլուխ կնամարդիներուն համար միայն առանց առաւելութեան է: Հանձարը կը սաւառնի իր ճառագայթով ու երաժշտութեամբ ամենամութ և ամենախուլ թուականներուն մօտը: Աշխարհը երիտասարդ է, նախկին մեծ մարդիկը մեզի կը կանչեն գորովանքով: Մենք ալ պէտք է սուրբ գիրքեր գրենք, երկինքն ու երկրաւոր աշխարհը դարձեալ միացնելու համար: Հանձարին զաղանիքն է՝ չհանդուրժել որ մեզի համար առասպել գոյութիւն ունենայ, իրակաշնացնել մեր բոլոր գիտցածը, արդի կեանքին բարձր նրբացման, արուեստներու, գիտութեանց, գիրքերու, մարդոց մէջ պահանջել բարեմտութիւն, իրականութիւն, և նպատակ մը. և առաջին, վերջին, միջին, և անվախճան, պատուել մէն մի ճշմարտութիւն կիրառումով:



Գ.

ՇԷՅՔԱՄԻՐ, ԿԱՄ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Մեծ մարդիկ տարողութեամբ և ընդարձակութեամբ աւելի նշանաւոր են քան իսկատիպ դրոշմով: Եթէ իսկատիպ դրոշմ պահանջենք, որ կը կայանայ իրենց ստայնը, սարդի պէս իրենց իսկ ազիքներէն հիւսելուն, կաւ գտնելուն, և ազիւսներ շինելուն, և տունը կազմելուն մէջ, ո՛չ մի մեծ մարդ իսկատիպ է: Արժէքաւոր իսկատպութիւնը օրիններուն հետ աննմանութեան մէջ ալ չի կայանար: Հերոսը ասպետներուն խուռնամբոխին և պատահարներուն խորերը կը գտնուի, և տեսնելով թէ մարդիկ ի՞նչ բանի կը կարօտին, և անոնց բաղձանքին մասնակից ըլլալով, աչքի և բազուկի պիտանացու երկայնութիւնը կ'աւելցնէ փափաքուած կէտին գալու համար: Ամէնէն մեծ հանճարը ամէնէն աւելի պարտական մարդն է: Բանաստեղծ մը աղմկող ուղեղ չէ, որ ըսէ ինչ որ ամէնէն բարձրն է, և ամէն բան ըսելուն պատճառաւ ալ վերջ ի վերջոյ աղէկ բան մըն ալ ըսէ, այլ իր ժամանակին և երկրին հետ միաձուլուած սիրտ մըն է: Իր արտադրութեան մէջ կամ շոտ և ցնորական ոչինչ կայ, այլ անոյշ և տխուր ըրջութիւն մը, ամենածանր համոզումներով բեռնաւորուած, և շեշտուած ամէնէն կտրուկ ձգտումով մը՝ զոր ո և է մարդ կամ ո և է դասակարգ կրնայ ցոյց տալ իր սպրած ժամանակին մէջ:

Մեր կեանքին Ոգին նախանձոտ է անհասներու մասին, և չուզեր ո և է անհատի մեծ ըլլալը, բայց եթէ ընդհանուրին մէջէն: Մեծ մարդ մը արեւ բարի օր մը առտուն կանուխ չարթննար և չըսեր. «Ես կեանք

քով լեցուն եմ, ես ծով ելլել կ'ուզեմ, հակարջային ցամաք մը գտնելու. այսօր ես պիտի քառակուսեմ շրջանակը, ես պիտի կրկեմ բուսարանութիւնը, և նոր ուսելիք մը պիտի գտնեմ մարդուն համար. ես մտքիս մէջ նոր ճարտարագետութիւն մը ունիմ, ես մեքենական նոր ոյժ մը կը նախատեսեմ» ո՛չ. այլ ինքզինքը կը զանէ խորհուրդներու և դէպքերու վտակին մէջ, իր ժամանակակիցներուն գազափարսներէն և կարիքներէն դէպ առաջ մղուած ուժգին: Կը կենայ հոն, ուր ուղակի կը նային մարդոց բոլոր աչքերը, և անոնց համարէն ձեռքերը կը շեշտեն ա՛յն ուղղութիւնը՝ որուն մէջ ինք պիտի քայլէ: Եկեղեցին մեծցուցած է զայն ձէսերու և հանդէսներու միջև, և իրեն հետ կը տանի անոր երաժշտութենէն իր առած յորդորը, և անոր երգերուն ու թափօրներուն պարտադրած մայր եկեղեցին կը շինէ: Եթէ պատերազմի միջոյի մը կը զուգադիպի, պատերազմը կը գտատարակէ զինքը շեփօրով, զօրանոցներու մէջ, և կը բարելուէ մարդանքը: Եթէ տեսնէ որ, երկու նահանգներ կը տառապին ամուխը, կամ ալիւրը, կամ ձուկը արտադրութեան վայրէն սպառումի վայրը բերելու համար, երկաթեայ ճամբու մը ծրագիրը կը յղանայ: Ամէն վարպետ իր նիւթերը տեղ մը ամփոփ դատած է, և իր կարողութիւնը կը կայանայ իր ժողովուրդին հանդէպ իր համակրութեան և իր գործածած նիւթերուն հանդէպ իր սիրոյն մէջ: Ուժի ի՞նչ խնայողութիւն, և ի՞նչ փոխարինութիւն կեանքին կարճատեւութեան համար: Ամէն բան իր ձեռքին տակ, իր բերնին եկած է: Աշխարհը այսպէս առաջ տարած է զինքը իր ճամբուն վրայ: Մարդկային ցեղը իր առջեւէն քալած է: Բյուրները հարթած, ծակերը լեցուցած, և գետերը կամրջած է: Մարդիկ, ազգեր, բանաս

տեղծներ, արհեստաւորներ, ամէնքը իրեն համար աշխատեցին, և ինք կը մտնէ անոնց վաստակներուն մէջ: Զգաւոր ընդհանուր գիծէն, ազգային զգացումէն և պատմութենէն դուրս ուրիշ բան մը ընտրէ՛, և ահա պիտի պարտաւորուի ամէն ինչ շինել իրեն համար. իր կարողութիւնները պիտի սպառին առաջին պատրաստութիւններուն մէջ: Մեծ հանճարային կարողութիւնը, — կրնանք գրեթէ այսպէս ըսել. — կը կայանայ բնաւ իսկատիպ չըլլալուն մէջ. այլ ըստ ամենայնի լաւ հաղորդիչ ըլլալուն մէջ, թողով որ աշխարհը ընէ ամէն բան, և հանդուրժելով որ օրուան ոգին անխափան անցնի միտքերուն մէջէն:

Շէյքսպիրի պատանեկութիւնը վիճակեցաւ այնպիսի ժամանակի մը երբ անգլիացի ժողովուրդը պահանջկոտ էր թատերական զբօսանքներու համար: Արքունիքը դիւրաւ կը զգածուէր քաղաքական ակնարկութիւններէն, և կը ջանար ջնջել զանոնք: Մաքրակրօնները, յարածուն և կորովի կուսակցութիւն մը, Անկլիքան եկեղեցիին մէջ ամէնէն աստուածավախը, կ'ուզէր անոնց ջնջուիլ: Բայց ժողովուրդը անոնց կարօտը կը քաշէր: Պանդոկի բակերը, անտանիք տուները, և գիւղական տօնավաճառներու մէջ յանպատրաստից կազմուած չըջափակերը պատրաստ թատրոններն էին թափառաչըջիկ դերասաններու համար: Ժողովուրդը այս նոր ուրախութեան համը առած էր. և, ինչպէս որ այսօր չենք կրնար օրաթերթերու ջնջուիլը յուսալ, — ո՛չ, ո՛չ իսկ ամենէն զօրաւոր կուսակցութեան կողմէ, — այն ատենն ալ ո՛չ թագաւորը, ոչ թեմական եպիսկոպոսը, առանձինն կամ միասին, կրնային ջնջել օրկան մը, որ միեւնոյն ժամանակ պարերգ, գիւցաղներգութիւն, ծրագիր, միթինկ, ընթերցարան, զաւեշտագիր,

և գրադարան էր: Հաւանաբար թագաւորը, բեմական եպիսկոպոսը և մաքրակրօնը. ամենքն ալ հոն իրենց մասնաւոր պատմութիւնը կը գտնէին: Ամէն պատճառներով ազգային հետաքրքրութիւն մը եղած էր, — բայց ո՛չ այնքան ակներեւ որ մեծ գիտնական մը միտքէն անցուցած ըլլայ Անգլիոյ պատմութեան մէջ մասնաւոր գլուխ մը նուիրելու անոր, — այսու հանդերձ ոչ նուազ ստուար, որովհետեւ աժան էր ինչպէս ծագարարի մը խոսնութիւն մէջ: Անոր կենսունակութեան ամենալաւ ապացոյցն է յանկարծ այդ ասպարէզին մէջ իւրժող գրագէտներուն թիւը. Բիտ, Մէրլօ, Կրին, Ճօնսըն, Չէրմէն, Տէքքըր, Ուէպսթր, Հէյուուա, Միտլթըն, Բիլ, Ֆօրտ, Մէսինճըր, Պօմօն և Ֆլէչը:

Թատերաբեմին միջոցաւ հասարակաց մտքին ապահով տիրապետութիւնը ձեռք բերել՝ ահա ինչ որ աւագ կարեւորութիւն ունի բանաստեղծին համար որ ճիշդ այդ բանին կ'աշխատի: Ժամանակ չի կորսնցնէր անպէտ փորձերով: Հոն ունինդիր կայ և նպատոզներ պատրաստ: Շէյքսպիրի պարագային շատ ա ելին ալ կայ: Այն միջոցին երբ Սթրէթֆօրտէն մեկնելով Լոնտոն գնաց, ամէն չըջանի և այլազան գրագէտներու հեղինակութեամբ թատերախաղերու մեծ թիւ մը կար ձեռագիր վիճակի մէջ, և կարգով կը ներկայացուէին: Ահա՛ Տրովազայի Զրոյցը, որ մաս առ մաս ամէն շաբթու ունկնդիրներու առջեւ կը հանուէր. Յուլիոս Կեսարի Մահը. և Պղուտարքոսէն ուրիշ պատմութիւններ, որոնք բնաւ տաղտուկ չէին պատճառեր. անգլիական պատմութեան ամբողջ շարք մը, Պրըթի և Արթըրի քրոնիկոններէն սկսեալ մինչեւ արքայ Հենրիկոնները, որոնց սիրով մտիկ կ'ընէին. և ցաւագին տաւմներու շղթայ մը, Իտալական զուարթ գրոյցները և սպանիական ճամբորդութիւններ, զորս գոյ

գիտեն բոլոր Լոնտոնի աշկերտները անգամ: Մէն մի թատերագիր աւելի կամ նուազ ճարտարութեամբ այս ամէն խառնակոյտով կը զբաղի, և յուշարարին ձեռքն են աւրուած և ձմութկուած ձեռագիրները: Հիմակ այլ ևս կարելի չէ ըսել ո՞վ առաջին անգամ գրեց զանոնք: Այնքան երկար տտեն թատրոնին սեփականութիւնը եւ դած են, և այնքան նորաբոյս հանձարներ ընդլայնած կամ փոփոխած են զանոնք, ճառ մը սպրդեցնելով, կամ ամբողջ տեսարան մը, կամ երգ մը աւելցնելով, որ ո՞ր ոք կրնայ այլ ևս սեփականութեան իրաւունք պահանջել թիւերու այս գործին մէջ: Բարեբախտաբար հիմա ասոր փափաքող ալ չկայ: Այս ուղղութեամբ պէտք ալ չկայ: Սակաւաթիւ են ընթերցողները, բայց հանդիսականներն ու ունկնդիրները շատ:

Շէյքսպիր, իր ընկերակիցներուն հետ միասին, հասկցաւ արժէքը հին խառնափնդոր թատերախաղերուն, սպառած միջրքին, որոնց մէջ կարելի էր ազատօրէն նոր փորձեր ընել: Եթէ այն տեսնները գոյութիւն ունենար արդի թատերախաղի մը հոչակը պաշտպանելու համար գործածուած միջոցը, բան մը կարելի չէր ընել: Ապրող Անգլիոյ բիրտ ու տաք արիւնը շրջան կ'ընէր թատերախաղին մէջ, ինչպէս փողոցային պարերգներու մէջ, և իր ուզած կերպով մարմին կուտար իր օգտաւարիկ և վհն երեւակայութեան: Բանաստեղծը հասարակաց աւանդութեան գետինի մը կը կտրօտի, որուն վրայ կարենայ բանիլ, և դարձեալ կարենայ իր արուեստը սահմանափակել պատշաճ բարեխառնութեան մէջ: Այդ գետինը կը կապէ զայն իր ժողովուրդին, հիմ մը կը հայթայթէ անոր շէնքին, և այնքան շատ գործ անոր ձեռքը յանձնելով հանդերձ ազատ կը ձգէ զայն և լիազօր կ'ընէ իր երեւակայութեան յանդգնութիւններուն

համար: Մէկ խօսքով, բանաստեղծը իր առասպելին կը պարտի ինչ որ քանդակագործութիւնը կը պարտէր մեհեանին: Քանդակագործութիւնը եգիպտոսի և Յունաստանի մէջ աճեցաւ իրրեւ ճարտարապետութեան ստորադաս. մեհեանի պատին զարդն էր, ի սկզբան՝ դրանդիններու վրայ փորագրուած կոշտ քանդակ մը, յետոյ քանդակը աւելի յանդուգն եղաւ, և զլուս մը կամ թեւ մը ցուկեցաւ պատէն դուրս, խմբանկարները աշակաւին կը պատշաճէին շէնքին համեմատութեան. և երբ վերջապէս ոճի և յարդարանքի ամենամեծ ազատութիւնը ձեռք բերուեցաւ, ճարտարապետութեան տիրակալն ոգին տակաւին կը պարտաւորէր տեսակ մը անդորրութիւն և վերապահում արձանին մէջ: Արձանը ինք իրեն յատուկ սկիզբ մը ունենալուն պէս, լքելով այլ ևս ու է առնչութիւն մեհեանին կամ պալատին հետ, արուեստին անկումը սկսաւ. քմայք, անհեթեթութիւն և ցուցամոլութիւն հին բարեխառնութեան տեղը բռնեցին: Կշիռքի այն անիւր՝ զոր քանդակագործը կը գտնէր ճարտարապետութեան մէջ, քերթողական տաղանդին վտանգաւոր զիւրաբորբոքութիւնը գտաւ զայն թատերական նիւթերու կուտակումին մէջ, որոնց արդէն վարժուած էր ժողովուրդը, և որոնք արդէն ունկնի տեսակ մը ընտրութիւն, զոր լոկ հանձար մը, ո՞րքան ալ արտասովոր ըլլար, չպիտի կրնար ստեղծելու յոյս ունենալ:

Արդարեւ, կ'երեւի թէ Շէյքսպիր ամէն ուղղութեամբ պարտքերու տակ մտաւ և կարողացաւ գործածել ինչ որ գտաւ. և այդ պարտքերուն գումարը կարելի է հանել Մէլոնի դժուարագիւտ հաշիւներէն «Հէնրի 2.» ի Ա. Բ. և Գ. մասերուն նկատմամբ, որոնց մէջ «6043 տողերէն 1771ը գրուած էին Շէյքսպիրը կան-

խող հեղինակի մը կողմէ, 2373ը իր կողմէ, իր նախորդներուն թողած հիմերուն վրայ, և 1899ը բոլորովին իրեն սեփական էին»։ Ուղղարկու քննութիւնը դժուարաւ կը թողու ու է տաւած մը, որ իր բացարձակ գիւտը ըլլայ։ Մէլոնի վճիւր արտաքին պատմութեան յոյժ կարեւոր մէկ կտորն է։ «Հէնրի Ը.»ին մէջ կարծեմ բացէ ի բայ կը տեսնեմ հունձքը նախատիպ բունին՝ որուն վրայ գեանդեց Շէյքսպիր իրեն յասուկ նուրբ խաւը։ Առաջին թատերախաղը գրած էր հանճարեղ, խոհական մարդ մը, բայց յոռի ականջով։ Կրնամ նշանակել մի առ մի անոր սողերը և ցոյց տալ անոնց ելեւէջը։ Տե՛ս Ուոյսիի մենախօսութիւնը, և Գրօմուէլի հետ յաջորդ տեսարանը, ուր, փոխանակ Շէյքսպիրի չափին, որուն գաղանիքը ա՛յն է որ խորհուրդը շինէ ձայնանիշը, ա՛յնպէս որ ընթերցումը զգայարանքին բերէ յանգր, սողերը որոշ ձայնանիշերով արուած են, և չափը նոյն իսկ բեմական պերճախօսութեան հետք մը ունի։ Սակայն թատերախաղը բոլոր իր ամբողջութեան մէջ կը պարունակէ Շէյքսպիրի ձեռքին անուրանալի գիծերը, և ինչ ինչ հատուածներ, ինչպէս թագադրութեան պատմութիւնը, ինքնագիր կը նմանին։ Միայն թէ տարօրինակ է որ Էլիզաբէթ թագուհին ուղղակի մեծարանքը յոռի չափով է։

Շէյքսպիր գիտէր որ աւանդութիւնը ու է գիւտէ աւելի լաւագոյն զրոյց մը կը հայթայթէ։ Եթէ ինքնատիպ կաղապարի նկատմամբ վարկ կորսնցնէր, միւս կողմէ սակայն իր աղբիւրները և միջոցները կ'աւելցնէր աւանդութեամբ, և Շէյքսպիրի ժամանակները մեր այսօրուան ճարճատուն և պոռոտ պահանջը չկայ ինքնատիպութեան մասին։ Միլիոնաւոր ընթերցողներու զրականութիւն չկար։ Տիեզերական ընթերցումը, աժան

մամուլը անձանօթ էին։ Անգրագէտ ժամանակներու մէջ երեւցող մեծ բանաստեղծ մը իր շրջանակին մէջ կը սուղէ ու է տեղ ճառագայթող ամէն լոյս։ Մէն մի մտաւոր գոհար, զգացումի իւրաքանչիւր ծաղիկ ժողովուրդին բերելը անոր սիրուն պաշտօնն է, և իր յիշատակը իր գիւտին հետ հաւասարապէս կ'արժեցնէ։ Ուստի նուազ հոգատար կ'ըլլայ թէ իր մտածումները ո՛ւրկէց ամտնցուած են, թարգմանութենէն, աւանդութենէն, հեռաւոր երկիրներու մէջ ճամբորդութենէն, թէ ներշնչումէն. ո՛ր աղբիւրէն ալ ըլլան, հաւասարապէս կ'ողջունուին իր անքննադատ ունկնդիրներուն կողմէ։ Այո՛, շատ մօտէն փոխ կ'առնէ։ Ուրիշներ ալ իրեն պէս խելացի բաներ կ'ըսեն, միայն թէ անոնք նոյնքան ալ խնդ բաներ կ'ըսեն, և չեն գիտեր թէ ե՞րբ խելացի խօսած են։ Ան կը ճանչնայ ճշմարիտ քարին կայծը, և բարձր տեղը կը դնէ դայն, ո՛ւր որ ալ գտնէ։ Այս իսկ է Հոմերոսի բարեղէպ գիրքը, թերեւս. և Չօսըրի և Սաստիի։ Անոնք կը զգային թէ ամէն մտացիութիւն իրենց մտացիութիւնն էր։ Եւ անոնք նոյնքան ընդօրինակիչ և պատմագիր են որքան բանաստեղծ։ Իւրաքանչիւր վիպասան աշխարհի բոլոր հարիւրաւոր պատմուածքներուն ժառանգորդն ու բաշխողը եղած է. — «Թեթի և Պեղոպի պատմութիւնը, և աստուածային Տրովադայի զրոյցը ներկայացնելով»։

Չօսըրի ազդեցութիւնը ակներեւ է բոլոր մեր նախկին գրականութեան մէջ. և աւելի վերջերը, ո՛չ միայն Քօբ և Տրայտըն կապուած են անոր, այլ, անգլիացի գրագէտներու բովանդակ ընկերութեան մէջ, դիւրաւ կը գտնուի չխոստովանուած աճազին պարտք մը։ Մարդ կը հիանայ այսքան թոշակաւորներ կերակրող վարժամութեան վրայ։ Իայց Չօսըր ինք. աճելի փոխառու

մըն է: Չօսըր շարունակ քաշեց Կիսո տի Գօլճնայէն, որուն Տրովական պատերազմին վրայ գրած լատիներէն վիպերգը իր կարգին բանագողութիւն մըն էր Դարէս Փռււզացիէն. Ովիդիոսէն և Ստատիոսէն: Յետոյ Բեդրարքոս, Պօքաչիօ և հարաւային քերթողները իր բարերարներն են. Վարդի Վէպը ուրիշ բան չէ եթէ ոչ խղճամիտ թարգմանութիւն մը Կիլիսոմ աը Լօռիսէն և Փան աը Մէօնէն: Տրոյլոս և Գրէսիյա՝ Ուրբանացի Լօլիոսէն, Աքլորն ու Աղուէսը՝ Մառիի զրոյցներէն. Համբաւի Տունը՝ Փրանսականէն կամ իտալականէն. և խեղճ Կօուըրը ուզածին պէս կը գործածէ իբր թէ անկապ իրեն համար քարաբովք մը ըլլար, անկէց իրեն տուն շինելու: Կը գողնայ աս՝ չքմեղացումով, — թէ իր առածը գտնուած տեղը արժէք չունի, բայց ամենամեծ արժէք կ'ունենայ ո՛ւր որ ինք կը թողու զայն: Գործնականապէս տեսակ մը կանոն եղած է զրականութեան մէջ, թէ բաւական է որ մէկը անգամ մը ինքզինքը կարող ցոյց տայ ինքնատիպ գրութեան, այնուհետեւ իրաւունք ունի ուզածին պէս գողնալու ուրիշներուն գրութիւններէն: Խորհուրդը սեփականութիւնն է անոր՝ որ կրնայ պահպանել և սնուցանել զայն. և անոր՝ որ կրնայ պատշաճօրէն տեղաւորել զայն: Տեսակ մը անճարակութիւն երեւան կը հանէ փոխ առնուած խորհուրդներուն գործածութիւնը. բայց զանոնք գործածելու ձեւը սովբեղնուս պէս՝ մեր իսկականը կ'ըլլան:

Այսպէս, ամէն ինքնատուութիւն յարաբերական է: Իւրաքանչիւր խորհող յետահայեաց է: Ուէսթմինսթրի կամ Ուաշինկթընի Օրէնսդիր Ժողովին հմուտ անդամը կը խօսի և կը քուէարկէ ի դիմաց հազարաւորներու: Յոյց տուէ՛ք մեզի ընտրողներու շրջանակը, և հիմա անտեսանելի խողովակները, որոնցմով երեսփոխան մը

կամ ծերակուտական մը իրազեկ եղաւ անոնց բաղձանքներուն, գործնական և բանգէտ մարդոց երամը, որոնք թղթակցութեամբ կամ խօսակցութեամբ, օրուան եղելութիւնները կը ջամբեն անոր, այն ատեն շատ բան պիտի պակսի անոր վեհ կացուղիքէն և պատկառանքէն: Ինչպէս Սրբ Բոպըրթ Բիլ և Մր. Ուէպսթր կը քուէարկեն, այնպէս ալ Լօք և Ռուսօ կը մտածեն ի դիմաց հազարաւորներու, և այսպէս ալ աղբիւրներ կային Հոմերոսի, Մէնուի, Սաստիի կամ Միլարնի չորս կողմը, որոնցմէ քաղեցին. բարեկամներ, համակրողներ, գիրքեր, աւանդութիւններ, առակներ, — ամէնքն ալ կորսուած, — որոնք, եթէ տեսնուին, պիտի նուազեցնեն զարմանքը: Ու է բանաստեղծ խօսա՞ծ է ինքնուրոյն հեղինակութեամբ: Ու է ընկերէ մը գերազանցուած զգացա՞ծ է ինքզինքը: Այս կոչը գրողին խղճին կը պատկանի: Գոնէ կա՞յ անոր կուրծքին տակ Դեղճիս մը որուն պատգամին դիմէ խորհուրդի մը կամ բանի մը համար, պատասխան առնէ և անոր կռթնի: Բոլոր պարտքերը զորս այսպիսի մարդ մը կրցաւ ուրիշներուն մտքին ընել, երբեք չեն խանգարեր ինքնատուութեան իր գիտակցութիւնը, որովհետեւ գիրքերու, կամ ուրիշ միտքերու մատակարարութիւնները մուխի շունչ մըն են բաղդատմամբ ս'յն անհատ իրականութեան՝ որով ինք յայտնուեցաւ աշխարհի:

Դիւրին է տեսնել թէ աշխարհի մէջ ի՞նչ լաւագոյն բան որ գրուած կամ եղած է հանճարին կողմէ, մէկ մարդու վաստակ չէ, այլ եկած է ընկերային լայն աշխատանքով, հազարաւորներ բանեցան մէկ մարդու պէս, հաղորդ ըլլալով միեւնոյն մղումին: Մեր անգլիերէն Ս. Գիրքը անգլիերէն լեզուին ուժին և երաժշտութեան մէկ սքանչելի նմոյշն է: Բայց մէկ մարդու ձեռքով

կամ մէկ ժամանակի մէջ չէ եղած, այլ դարեր ու եկեղեցիներ կատարելագործեցին զայն: Երբեք չէ եղած ժամանակ մը որ ու է թարգմանութիւն գոյութիւն ունեցած չըլար: Ժամագիրքը, իր կորովով ու զգացումներու խորութեամբ հիաղեցիկ, ծաղկաքաղ մըն է դարերու և ազգերու բարկապաշտութեան, կաթոլիկ եկեղեցիին աղօթքներուն և ծէսերուն թարգմանութիւնը, — և անոնք ալ հաւաքուած երկար շրջաններու մէջ, բովանդակ աշխարհի զանազան սուրբերու և սրբազան մատենագիրներու աղօթքներէն և խորհրդածութիւններէն: Գրատիոս միկենոյն զիտողութիւնը կ'ընէ Տէրունական Աղօթքին նկատմամբ, թէ անոր մէն մի մասերը արդէն Քրիստոսի ժամանակ կը գործածուէին բարունական պաշտամունքին մէջ: Եւ հաւաքեց Քրիստոս ոսկի հատիկները: Անգլիոյ Հասարակաց Օրէնքին շղուալեղուն, դատական ատեաններուն ազդու ձեւերը, և օրէնսգիտական որոշողութեանց ճշտութիւնն ու ինքնագոյ ճշմարտութիւնը հանգանակութիւնն են բոլոր ա՛յն սրատես, հզօրամիտ մարդոց՝ որոնք ապրեցան այդ օրէնքներով կառավարուած երկիրներուն մէջ: Պղուտարքոսի թարգմանութիւնը իր պատուականութիւնը կ'ըստանայ թարգմանութեան վրայ թարգմանութիւն ըլլալէն: Չկար ժամանակ մը որ Պղուտարքոս թարգմանուած չըլար: Բոլոր իրապէս բնալեզուիկ և ազգային հատուածները պահուած են, և միւսները յաջորդաբար բարձուած և մէկ կողմ նետուած: Այս կերպ վարձունքի մը ենթարկուած են շատ կանուխէն այդ տեսակ գիրքերուն բնագիրները: Աշխարհ այս համարձակութիւնը կուտայ իրեն համաշխարհիկ գիրքերու համար: Վէտաները, Եզովպոսի Առաքիները, Բիլբէյը, Արաբական Գիշերները, Սիտը, Իլիականը, Բօպին Հուտը, Սկով-

տական Երգերը առանձին մարդոց գործը չեն: Այսպիսի գործերու շարադրութեան մէջ, ժամանակը կը խորհի, շուկան կը խորհի, հիւսնը, ատաղձագործը, վաճառորդը, հողագործը, հեղնողը, ամենքն ալ կը խորհին մեզի համար: Մէն մի գիրք իր ժամանակին համար կը հայթայթէ սիրուն բառ մը, մէն մի քաղաքային օրէնք, մէն մի առեւտրական շարժում, մէն մի օրուան յիմարութիւն, և ընկի ուղղափառ հանճարը որ չի վախնար կամ չամչնար իր ինքնատուութիւնը ամէնուն ինքնատուութեան պարտական ըլլալէն, յաջորդ դարուն առջև կը կանգնի իբրև իր իսկականին արձանագրիչը և մարմնացումը:

Պէտք է շնորհակալ ըլլանք հնախոյզներուն քննութիւններուն, և Շէյքսպիրեան Ընկերութեան, ճշտած ըլլալուն համար Անգլիական Տնամին քայլերը՝ սկսեալ եկեղեցիներու մէջ և եկեղեցիներու կողմէ տօնուած Խորհուրդներէն, և եկեղեցիէն վերջնական անջատումէն, և աշխարհիկ խաղերու կատարումն մինչև այն շրջանը՝ երբ թատերաբեմը գրաւեցին բուն ա՛յն թատերախաղերը, զորս Շէյքսպիրը այլայլեց, վերակազմեց, և վերջի վերջոյ իւրացուց: Յաջողութենէն հրճուելով, և խնդրի վերջոյ իւրացուց: Յաջողութենէն հրճուելով, և ամէն գրարոյն յարաճուն յանկուցումէն խտրելով, ամէն գրարան պրպտեցին, ամէն ծակուծուկ բացին, խոնաւութեան և որդերուն ճարակ եղած բոլոր դեղին տեսարակները աչքէ անցուցին, ա՛յնքան սաստիկ էր յոյսը երևան հանելու համար թէ արդեօք պատանին Շէյքսպիր գողցա՞ւ թէ ոչ, արդեօք թատրոնի դուռներուն առջև իբրև ձիւ պահպան կեցա՞ւ թէ ոչ, դպրոց բացա՞ւ:

Տեսակ մը ցաւալի յիմարութիւն է որ անցնող դարը կարեւորութիւն չիտար ա՛յն առարկային որուն վրայ կը շողան բոլոր կանթեղները, և կը դառնան

բոլոր աչքերը: Սա՛ կամ նա թագուհիին, թագաւորին, իշխանին և իշխանուհիին նկատմամբ ամենաչնչին մանրամասնութիւններ կը վխտան: Իսկ կը մոռնայ և անյիշատակ կ'անցընէ ա՛յն մարդը որ Սաքսոնական ցեղը իրեն մէջ կը կրէ ներշնչումով մը որ անոր սնունդը կ'ըլլայ, և որուն խորհուրդներովը պիտի սնանէր աշխարհի ամէնէն յառաջընթաց ժողովուրդը: Ժողովուրդային թատերադիր մը, — ո՛չ ոք միտքէն անցուց թէ անիկա մարդկային ցեղին բանաստեղծը պիտի ըլլար. և այս գաղտնիքը հաւատարմօրէն կը պա՛ռուի ո՛չ միայն բանաստեղծներէն և մտաւորականներէն, այլ նաև սնամիտ մարդոցմէն և դրանիկներէն: Պէյքըն որ իր ապրած ժամանակին համար իմացականութեան անուանուշարքը պատրաստեց, երբեք չի յիշատակեր անոր անունը: Պէն ձօնսըն, թէև յարգանքի և դովեստի քանի մը բառեր ունի, բայց երբեք չի կասկածիր այն առաճգական համբաւը որուն առաջին թրթռումները կը հասնէին իրեն: Անտարակոյս վեհանձնութիւն նկատեց իրեն համար Շէյքսպիրի հասցէին իր գրած քանի մը դրուատական բառերը, և կասկած չկայ թէ ինքզինքը երկու բանաստեղծներէն լուսագոյնը կը համարէր:

Եթէ խելացի պէտք է խելացին ճանչնալու համար, ըստ առածին, Շէյքսպիրի ժամանակը ընդունակութիւն ունէր այս կէտը ճանչնալու: Սըր Հէնրի Ուօթթըն Շէյքսպիրէն չորս տարի վերջ ծնած էր և անորմէ քսաներեք տարի ետքը մեռաւ. և իր թղթակիրցներուն և ծանօթներուն մէջ կը գտնեմ հետեւեալ անձերը. Թէոտոր Պէզա, Այդաք Գալօպօն, Սըր Ֆիլիբ, Սիանի, Էսէքսի կոմսը, Լորտ Պէյքըն, Սըր Ուօթթր Բալէյ, ձօն Միլտըն, Սըր Հէնրի Վէյն, Այդաք Ուօլթըն, Տքր. Տօն, Ապրամ Գոուլէյ, Պէլլէրմին, Չարլզ Գաթըն, ձօն Բիմ, ձօն

Հէյլզ, Բէրլէր, Վիէթա, Ալպերթըուս ձէնթիլիս, Բօր Սարբի, Արմինիուս. ասոնց ամէնուն հետ իր հաղորդակցութեան մէկ նշանը կայ, ասոնց թուարկելու ուրիշները զորս անշուշտ տեսաւ, — Սքէնսոր, ձօնսըն, Պօմօն, Մէսինճըր, երկու Հէրպերթները, Մէրլօ, Չէբմէն, և մնացեալը: Պէրիկլէսի ժամանակ Յունաստանի մէջ երեւոյզ մեծ մարդոց համաստեղութենէն ի վեր, երբեք այնպիսի ընկերութիւն եղած չէր, այսու հանդերձ անոնց հանճարը թերացաւ տիեզերքի մէջ ամենալաւ գլուխը երեւան բերելու մասին: Մեր քերթողին դիմակը անթափանցելի էր: Լեռը մօտէն չի տեսնուիր: Դար մը պէտք եղաւ անոր նկատմամբ կասկած արթննալու համար. և իր մահէն երկու դարեր պէտք էր անցնէին մինչև որ սկսաւ երեւիլ անոր մասին քննադատութիւնը, զոր կարելի ըլլայ բաւականաչափ կոչել: Կարելի չէ եղած Շէյքսպիրի պատմութիւնը յաման գրել մինչև հիմա. որովհետև ան գերման գրականութեան հայրն է: Գերման գրականութեան արագ ոստումը ներքնապէս կապակցութիւն ունի Շէյքսպիրի գերմաներէնի մէջ մուտ գործելուն հետ Լէսինկի ձեռքով, ինչպէս նաև Վիէյանտի և Շլէյկէլի ձեռքով անոր գործերուն թարգմանութեան հետ: Մինչև ժ.ժ. դար, որուն հայեցողական ոգին տեսակ մը կենդանի Համլէթ է, Համլէթի թատրերգութիւնը իրացկոտ ընթերցողներ չգտաւ: Հիմա, գրականութիւնը, իմաստասիրութիւնը և խորհուրդը Շէյքսպիրացած են: Իր միտքը հորիզոնէ է որմէ անդին հիմա չկնք տեսներ ոչինչ: Մեր ականջները անոր յանգով մարզուած են երաժշտութեան: Գօլրիճ և Կէօթէ միակ քննադատներն են՝ որոնք մեր համոզումները արտայայտած են քիչ շատ բաւարար հաւատարմութեամբ. բայց ամէն մշակեալ միտքերու

մէջ լռին գնահատութիւն մը կայ անոր գերադրական կարողութեան և գեղեցկութեան մասին, որ Քրիստոնէութեան նման իր ժամանակովը կ'որակէ:

Շէյքսպիրեան Ընկերութիւնը խուզարկած է ամէն ուղղութեամբ, յայտնած է խուսափող իրողութիւնները, դրամ առաջարկած է իրրև ապացոյց ծառայող ո և է տեղեկութեան համար, և արդիւնքը: Անգլիական թատերաբեմին պատմութեան կարեւոր լուսաբանութեանէն զատ, իրողութիւններ քաղուած են բանաստեղծին սեփականութեան աթիւ եղած կարգադրութիւններուն նկատմամբ: Կ'երեւի թէ տարուէ տարի իր բաժինը մեծցաւ թատրոնին շահերուն մէջ, անոր հագուստներն ու ուրիշ կազմածները իրենն էին, կալուած մը գնեց իր հայրենի գիւղին մէջ իր վաստակովը իրրև թատերադիր և իրրև բաժնետէր, Սթրէթֆորտի ամենալաւ տունին մէջ բնակեցաւ, սկսաւ փոխ դրամ տալ, և ճշմարիտ հողատէր մը եղաւ: Մաքսթրը գրած պահուն, դատ բացաւ Սթրէթֆորտի դատարանին առջև Ֆիլիբ Րօճըրսի դէմ, որմէ երեւունը չինգ շիլին տասը բէնս կը պահանջէր՝ զանազան ասիթներով անոր յանձնած ցորենին հաշուէն. ամէն կերպով ալ բարի ամուսին մը կը թուի ըլլալ, առանց ո և է ծայրայեղութեան կամ այլանդակութեան համբաւի: Հեղահամըոյր մարդ մըն էր, դերասան մը և բաժնեկից մը թատրոնին մէջ, միւս դերասաններէն և վարիչներէն առանց աչքառու կերպով որոշուելու:

Բայց այս խուզարկութիւնները անոր վիճակին վերաբերմամբ ի՛նչ հատկոտոր տեղեկութիւններ ալ տան մեզի, լոյս չեն կրնար սփռել ա՛յն անհուն գիւտին վրայ, որ մեզի համար անոր ձգողական ուժին թագուն մագնիսն է: Մենք անճարակ պատմագիրներ ենք: Կը

պատմենք ազգականութեան, խնամութեան, ծնունդի, ծննդավայրի, դպրոցական կեանքի, դպրոցական ընկերներու, դրամ շահելու, ամուսնութեան, գիրքերու հրատարակութեան, համբաւի, մահուան քրոնիկները և երբ այս ըսի-ըսուներուն վերջը գանք, ասոնց և աստուածային հանճարին միջև առնչութեան ճառագայթ մը չերեւիր: Բանաստեղծութեան իսկութիւնն է, Հրաշքին ծիածան ազջկան պէս, խոյանալ անտեսանելիէն դուրս, եղծել անցեայր, և հերքել ամէն պատմութիւն: Մէլօն, Ուորպրթըն, Տայս և Գօլիբը վասնեցին իրենց կանթեղին իւզը: Նշանաւոր թատրոնները, Գրվընթկարտըն, Տրիւրի Լէյն, Բառքը և Թռիւմօնթ, ընդունայն աշխատակցեցան: Պէթըրթըն, Կէրրիք, Քէմպլ, Քին, և Մէքրէտի իրենց կեանքը նուիրեցին այս հանճարին. պսակեցին, լուսաբանեցին զայն, խոնարհեցան անոր, արտայայտեցին զայն: Բայց հանճարը չի ճանչար գանոնք: Յետոյ սկսաւ Շէյքսպիրի գործերէն արտասանութիւնը. ոսկի բառ մը կը ցատկէ անմահօրէն բոլոր այդ նկարէն իմաստակութենէն, և քաղցրօրէն կը տանջէ մեզ հրաւէրներով դէպի անոր անմատոյց ներքին աշխարհները: Կը յիշեմ թէ որ մը տեսնելու գացած էի Համլէթը, ներկայացուցած նշանաւոր դերասանի մը կողմէ, որ անգլիական թատերաբեմին պարծանքն էր և ի՛նչ որ լսեցի, ի՛նչ որ հիմա կը յիշեմ, դերասանին չի պատկանիր, դերասանը անոր մէջ բաժին չունէր այլ պարզապէս Համլէթին հարցումն էր ոգիին, — «Ինչ կը նշանակէ որ դուն, մեռած դիակ, դարձեալ կատարեալ գրանով այսպէս կրկին կ'այցելես լուսինին շառայներուն»: Այդ երեւակայութիւնը որ աշխարհի ծաւալին չափ կ'ընդլայնէ ա՛յն խուցը որուն ներսը ինք կը գրէ, մեծ ու պզտիկ, բարձր ու ստորին գործիչնե-

լով կ'ողողէ դայն, և նոյնքան արագօրէն խոշոր իրականութիւնը կը վերածէ լուսինն շառայներուն: Իր մոգական արուեստին այս խաղերը իր թատերական նեղ խուցին պատրանքները կ'անհետացնեն մեր աչքին: Ու և է կենսագրութիւն կրնա՞յ լոյս սփռել ա՛յն վայրերուն վրայ՝ որոնց մէջ սեղի կուեննայ «Ամբան Գիշերուան Երազ»ը: Այս փափուկ ստեղծագործութեան ծրնունդը Շէյքսպիրի մտերմօրէն հաղորդե՞ց ու և է նոտարի, կամ թաղին արձանագրիչին, եկեղեցականին, թաղակաշինին, Սթրէթֆօրտի մէջ: Արտէնի անտառը, Սքօն դղեակին թեթև օդը, Բօրչիայի ամարանոցին լուսնկան, Օթէլլոյի գերութեան «ընդարձակ անձաները, և ծոյլ անապատները», — ո՞ւր է հեռաւոր ազգականը, տեղեկան տոմարները, կամ անհատական նամակ մը, որ այս գերակայ գաղանիքներէն բառ մը պահած ըլլայ: Մէկ խօսքով, այս տռամին, ինչպէս արուեստի բոլոր մեծ գործերուն մէջ, — Եգիպտոսի և Հնդկաստանի կիկլոպեան ճարտարագետութեան մէջ, Փիդիասեան քանդակագործութեան մէջ, Գոթական մայր եկեղեցիներու, Իտալական նկարչութեան, Սպանիոյ և Սկովտիոյ ժողովրդական երգերու մէջ, — Հանճարը սանդուխը իր ետեւէն կը քաշէ, երբ ստեղծագործող դարը ճամբայ կ'ելլէ դէպի երկինք, և տեղի կուտայ նոր դարու մը, որ գործերը կը տեսնէ, բայց ի զուր կը վնասուէ անոնց պատմութիւնը:

Շէյքսպիրի միակ կենսագիրը Շէյքսպիրն է. և նոյն իսկ ինք ալ բան մը չի կրնար ըսել, ի բաց առեալ Շէյքսպիրին, որ մեր ներսիդին է, այսինքն մեր ամէնէն աւելի ըմբռնող և համակրող ժամուն: Չի կրնար իր եռոտանիին վրայէն ելլելով տալ մեզի անէքթոսներ իր ներշնչումներուն վրայ: Կարդացե՛ք տքնաջան Տայսի և

Գօլիլըրի ձեռքով խուզարկուած, վերլուծուած և բաղդատուած հին վաւերաթուղթերը, և ըսէ՛ք թէ զիրար կը բռնե՞ն, թէ առաջին պատմութիւնը վերջինին հետ կը կապուի՞, կամ անոնցմէ ո՞րը կուտայ մարդուն նկատմամբ ամէնէն պակի պատմական հայեացք մը:

Ուստի, եթէ մեր արտաքին պատմութիւնը այսքան նիհար է, սակայն, Շէյքսպիրը իրեւ կենսագիր ունենալով, իրօք կ'ունենանք նիւթական տեղեկութիւն մը, ա՛յն՝ որ կը պատկերացնէ նկարագիրն ու բախտը, ա՛յն՝ զոր անհրաժեշտ է մեզի գիտնալ, եթէ կ'ուզենք դիմաւորել մարդը և վարուիլ անոր հետ: Իր արձանագրուած համոզումները ունինք ա՛յն հարցերուն վրայ, որոնք պատասխան կը բարբախեն մէն մի սրտի վրայ, — կեանքի և մահուան, սիրոյ, հարստութեան և աղքատութեան, կեանքի մրցանակներուն և անոնց առաջնորդող ճամբաներուն, մարդոց նկարագիրներուն, և անոնց բախտին վրայ ներգործող թագուն ու յայտնի ազդեցութիւններուն, և այն խորհրդաւոր ու դիւային կարողութիւններուն մասին, որոնք կը դիմադրեն մեր գիտութեան և իրենց չարութիւնն ու ձիրքը կը խառնեն մեր ամէնէն պայծառ ժամերուն ոստայնին մէջ: Ո՞վ երբեք կարդացած է Հնչեակներուն հատորը, առանց տեսնելու թէ բանաստեղծը անոնց մէջ յայտնած է, դիմակներու տակ՝ որոնք սակայն բանիմացներուն համար դիմակ չեն, բարեկամութեան և սիրոյ երգը, զգացումներու շփոթութիւնը մարդոց ամէնէն դիւրազգածին, և միևնոյն ժամանակ ամէնէն մտացիին մէջ: Իր անհատական մարդուն ո՞ր գիծը ծածկած է իր ստուամներուն մէջ: Ճէնթլմէնի և թագաւորի իր լիուլի պատկերներուն մէջ կրնանք ճշդել թէ ո՞ր ձեւերէն և ո՞ր մարդկայնութիւններէն կ'ախորժէր ինքը, իր հրճուանքը բա-

րեկամներու հոյին, ընդարձակ ասպնջականութեան, զուարթառատ տուրքի մէջ:

Թո՛ղ Թիմօն, թո՛ղ Ուօրուիք, թո՛ղ վաճառական Անթօնիօ երաշխաւորեն անոր մեծ սրտին համար: Շէյքսփիր ո՛չ թէ ամէնէն քիչ ճանչցուած անձն է, այլ ամբողջ արդի պատմութեան մէջ մեզի ծանօթ միակ անձն է: Բարոյականի, քաղաքավարութեան, տնտեսագիտութեան, իմաստասիրութեան, կրօնքի, ճաշակի, կենցաղավարութեան ո՞ր կէտը կարգի կանոնի դրած չէ ան: Իր մտութիւնը ո՞ր խորհուրդը մութի մէջ թողուցած է: Մարդուն գործին ո՞ր շրջանակը, ո՞ր պաշտօնը չէ յիշած: Ո՞ր թաղաւորին չէ սովրեցուցած կառավարել, ինչպէս Թալմա սովրեցուց Նարոլէոնին: Ո՞ր աղջիկը իր փափկութենէն աւելի փափուկ չգտաւ զայն: Ո՞ր սիրողը գերազանց սիրող մը չգտաւ զայն: Ո՞ր իմաստունէն աւելի հեռատես չեղաւ: Ո՞ր ճէնթլմէնը չհրահանգեց իր կոշտ վարժունքին մէջ:

Քանի մը կարող և զնահատող քննադատներ կը կարծեն թէ ո և է քննադատութիւն չարժեք Շէյքսփիրի համար, թէ անոր թատերական արժանիքը վեր է ամէն քննադատութենէ, թէ ան սխալ կերպով իբրև բանաստեղծ և իմաստասէր դատուած է: Ես ալ այդ քննադատներուն չափ իրազեկ եմ անոր թատերական արժանիքին, սակայն դարձեալ երկրորդական կը համարիմ զայն: Ան լեցուն մարդ մըն էր որ կ'ախորժէր խօսելէն. խորհուրդներ և պատկերներ արտաբուրող ուղեղ մը, որ դուրս պոռթկալու տեղ մը փնտուելով, առամը կամ թատրոնը գտաւ պատրաստ: Եթէ նուազ լեցուն ըլլար, պարտաւոր պիտի ըլլայինք քննել թէ ի՛նչպէս լեցուց իր տեղը, թէ ո՞րքան լաւ թատերագիր մըն էր, — և աշխարհի ամենալաւն է: Բայց խնդիրը այն է թէ իր

ըսածները ա՛յնքան կշիռք ունին որ սովորականէ աւելի ուշադրութեան կը կարօտին, և տեսակ մը սուրբ է որուն պատմութիւնը պէտք է արուի ամէն լեզուներով, արձակ և ոտանաւոր, երգերով և պատկերներով, և վերածուի առակներու. ա՛յնպէս որ սուրբը իր նիւթական նշանակութիւնը կը կորանցնէ խօսակցութեան, կամ աղօթքի, կամ օրինագիրքի մէջ, բարդատմամբ անոր կիրառման տիեզերականութեան: Այսպէս կը պատշաճի իմաստուն Շէյքսփիրին և կեանքին անոր մատենին: Եղանակները գրեց ան բոլոր մեր արդէ երաժըշտութեան համար, արդէ կեանքին բնագիրը գրեց, քաղաքավարութեան բնագիրը, գծեց Անգլիոյ և Եւրոպայի մարդը, Ամերիկայի մարդուն հայրը. գծեց մարդը, և նկարագրեց օրը, և անոր մէջ ըլլալիքը, կարգաց այրերուն և կիներուն սիրտերը, անոնց ուղղամտութիւնը, և անոնց յետին միաքը, ու խորամանկութիւնները, անմեղ դաւերը, և անցումները՝ որոնցմով առաքինութիւններն ու մոլութիւնները կը սահին դէպի իրենց ներհակները. կրցաւ բաժնել մօրը դերը հօրը դերէն հանդէպ տղուն, կամ գծեց աղատութեան և ճակատագրի նուրբ սահմանանիչերը, ճանչցաւ բնութիւնը վարող սանձու մի օրէնքը, և մարդուն վիճակած բոլոր քաղցրութիւններն ու բոլոր սարսափները ա՛յնքան ճշմարտիւ բայց ա՛յնքան ալ կակղօրէն կը բնակին անոր մտքին մէջ որքան դաշտանկարը աչքին վրայ: Եւ կեանքի այս իմաստութեան կարեւորութիւնը ուշադրութենէ կը վրիպեցնէ Տոստին կամ Դիւցաղնեզութեան ձեւը: Ո՞րն աւելի արժէք ունի, թո՛ւղթը թէ արքայական հրամանը որ անոր վրայ գրուած է:

Շէյքսփիր ականաւոր հեղինակներու դասակարգութենէն ա՛յնքան դուրս է որքան դուրս է ամբօխէն: Անըմ-

ինչպէս ծաղիկի մը պատկերը կը դրոշմուի իօտէ թի-
թեղին վրայ, և յետոյ ուզածին պէս դրոշմեց մինչև
մէկ միլիոն: Միշտ առարկաներ կան. բայց չկար բնաւ
պատկերացում: Անա վերջապէս կատարեալ պատկերա-
ցում, և ձեւերու աշխարհը թո՛ղ հիմա նստի իր կեն-
դանագրերը քաշել տալու համար: Դեղագիր չի տրուիր
Շէյքսպիր մը շինելու համար, բայց իրերը երգի թարգ-
մանկու հնարաւորութիւնը ապացուցուած է:

Իր քնարերգական կարողութիւնը կը կայանայ թա-
տերախաղին ոգիին մէջ: Հնչեակները, թէև անոնց գե-
ղեցկութիւնը կորսուած է տաւմներուն շքեղութեան
մէջ, անոնց չափ անզուգական են. և տողերու լոկ ար-
ժանիքը չէ, այլ կտորի ամբողջական արժանիք, ինչպէս
անզուգական անձի մը ձայնին չէտը, այսպէս ալ աս
քերթողական էակներու ճառ մըն է, և մէն մի մասը
այսօր ա՛յնքան անարտաղբելի է որքան ամբողջ քեր-
թուած մը:

Թէև թատերախաղերուն մէջ ճառերը, և առանձին
տողերը ա՛յնպիսի գեղեցկութիւն մը ունին՝ որ ականջը
կը հրապուրեն անոնց վրայ դադար մը առնել իրենց
քաղցրաձայնութեան համար, այսու հանդերձ մէն մի
տող ա՛յնքան նշանակալից է, և նախորդներուն ու հե-
տեւորդներուն հետ ա՛յն աստիճան կցորդուած, որ արա-
մարանողը կը գոհանայ: Միջիւնները նո՛յնքան հիանա-
լի են որքան ծայրերը. մէն մի ստորադաս գիւտ, որով
կը ջանայ անհաշտ ներհակները կապակցել, քերթուած
մըն է ան ալ: Զի պարտաւորութիւն ձիէն վար իջնել ու
քալել, որովհետև անոր ձիերը իրեն հետ կը սուրան հե-
ռաւոր ուղղութեան մը. միշտ կը վերելակէ:

Ամենափափուկ բանաստեղծութիւնը փորձ եղած է
է առաջին անգամ. բայց խորհուրդը այլաձեւութիւն

կրեց՝ փորձ ըլլալէն ի վեր: Հմուտ մարդիկ յաճախ
ճարտարութեան բարձր աստիճանի մը կը հասնին տաղ
գրելով. բայց դիւրին է անոնց քերթուածներուն մէջէն
կարգալ իրենց անձնական պատմութիւնը. ու է մէկը՝ որ
մասերուն ծածօթ է՝ կրնայ ամէն ձեւի անունը տալ. աս
Անդրէասն է, ան Հոսթէլը: Այսպէս իմաստը արձակի
ոճով գրուածի պէս կ'ըլլայ: Թրթուր մըն է թեւերով,
բայց ոչ տակաւին թիթեռնիկ: Բանաստեղծին մտքին
մէջ իրը կ'երթայ խորհուրդի նոր տարր կը կազմէ, և
կը կորսնցնէ ամէն ինչ որ կեղեւային է: Այս վեհու-
թիւնը անբաժան է Շէյքսպիրէն: Իր պատկերներուն
ճշմարտութենէն և հաւատարմութենէն դատելով, կ'ը-
սենք թէ դասը գոց գիտէ: Այսու հանդերձ եսականու-
թեան հետք մը չկայ:

Աւելի արքենի դիմագիծ մըն ալ կը պատկանի
քերթողին: Ըսել կ'ուզեմ անոր զուարթութիւնը, ա-
ռանց որուն ոչ ոք կրնայ բանաստեղծ ըլլալ, — քանի
որ անոր ձգտումը գեղեցկութիւնն է: Առաքինութիւնը
կը սիրէ, ո՛չ թէ անոր պարտաւորիչ հանգամանքին հա-
մար, այլ անոր շնորհքին համար. աշխարհը, մարդը,
կինը հրճուանք կ'առթեն անոր, անոնցմէ կայծկտող
սիրուն լոյսին համար: Ան տիեզերքին վերև կը ցանէ
գեղեցկութեան, ուրախութեան և ցնծութեան ոգին: Ե-
պիկուրոս կը պատմէ թէ բանաստեղծութիւնը ա՛յնպիսի
հրապոյրներ ունի որ տարփածու մը կրնայ մոռնալ իր
տարփուհին՝ անոնց մասնակցելու համար: Եւ ճշմարիտ
աշուղները աչքի զարնուած են իրենց անյողդողդ ու
զուարթ խառնուածքին համար: Հոմերոս ճառագայի՛ի
մէջ կը բնակի. Զօսրը ուրախ է և կայտառ. և Սաստի
կ'ըսէ. «Դուրսերը զրոյց տարածուեցաւ թէ ես ապաշ-
խարող եմ. բայց ապաշխարութեան հետ ես ի՛նչ գործ

ունիմ» : Շէյքսպիրի երանգն է ոչ նուազ տիրական և զուարթ, — այլ շատ աւելի տիրական և զուարթ : Իբրև անուր ուրախութիւն և ազատագրութիւն կը թելադրէ մարդոց սրտին : Եթէ այսօր իսկ երևի մարդկային հոգիներու ու է ընկերութեան մէջ, ո՞վ պիտի չուզէ քալել անոր խումբին մէջ : Ի՞նչ բանի որ հպի, իր տօնական ոճէն փոխ կուտայ առողջութիւն և երկարակեցութիւն :

Եւ արդ, բուն մարդը ի՞նչպէս կը համեմատի բանաստեղծին և բարեգործին հետ, երբ առանձնութեան մէջ, մեր սկանչները գոցելով անոր համբաւին ցոլացումներուն, ջանանք կշիռքի զարնել զայն : Առանձնութիւնը խիստ դասեր ունի. կրնայ սովբեցնել մեզի ինչպէս հերոսներուն և բանաստեղծներուն միանգամայն. և Շէյքսպիրն ալ կը կշռէ, և կը տեսնէ որ ան ալ մասնակից է մարդկութեան կիսկատարութեան և անկատարելութեան :

Շէյքսպիր, Հոմերոս, Տանթէ, Չօսըր, տեսան տեսանկի աշխարհին վերև սաւառնող իմաստին շքեղութիւնը. ճանչցան թէ ծառ մը խնձոր արտադրելէ տարբեր գործածութիւն մըն ալ ունի, ցորենը ալիւրէ տարբեր, և երկրագունձա՞ր՝ արօրէ և ճամբաներէ տարբեր, թէ այս բաները երկրորդ և աւելի նուրբ հունձք մը կը բերեն միտքին, անոր մտածումներուն խորհրդանշանները ըլլալով, և իրենց բնական պատմութեան մէջ մարդկային կեանքին նկատմամբ տեսակ մը համր մեկնութիւն հաղորդելով : Շէյքսպիր գործածեց զանոնք իբրև ներկ՝ իր պատկերը բազադրելու համար : Թխսեց անոնց գեղեցկութեան վրայ, և այդպիսի հանճարի մը անխուսափելի թուող քայլը չառաւ բնաւ, այսինքն

չխուզարկեց ա՛յն ոյժը որ կը բնակի այդ խորհրդանշաններուն մէջ և այս կարողութիւնը կը հաղորդէ, — ի՞նչ կ'ըսեն արդեօք անոնք : Իր հրամանին սպասող տարբերը զբօսանքներու վերածեց : Մարդկային սեռին խրախճանքներ սարքերու վարպետն էր : Որպէս թէ մէկը, գիտութեան վեհագոյն կարողութեանց միջոցաւ, ձեռքին մէջ ունենայ գիսաւորները, կամ մոլորակներն ու անոնց լուսինները, և քաշէ հանէ զանոնք իրենց պարունակներէն որ քաղաքապետական հրթիռներուն հետ չողչողան տօնական գիշեր մը, և բոլոր քաղաքներուն մէջ բէքլամ' ընէ, «Այս երեկոյ արտատո՞վոր հրախաղութիւն» : Բնութեան ազգակները և զանոնք հասկնալու կարողութիւնը փողոցային ցայգահանդէսէ մը կամ սիկարի չունչէն աւելի արժէք չունին միթէ : Կը յիշուի գա՛րձեալ Գուրանին պատգամ — բնաբանը. «Երկինքը, երկիրը, և ամէն ինչ որ անոնց միջև է, կը կարծէք թէ մենք կատակով ստեղծած ենք զանոնք» : Յորչափ խնդիրը տալանդի ու մտաւոր կարողութեան վրայ է, մարդոց աշխարհը իրեն հաւասար չունի : Բայց երբ խնդիրը կեանքին, և անոր նիւթերուն, և անոր օժանդակներուն վրայ է, Շէյքսպիրէն ի՞նչ կ'օգտուինք արդեօք : Ի՞նչ կը սորվեցնէ մեզի : «Տաներկուերորդ Գիշեր»ը, կամ «Ամբան Գիշերուան Երազ»ը, կամ «Չմբան Իրիկուան մը Զրոյցը», կամ աւելի կամ նուազ ի՞նչ կը սովբեցնէ մեզի ուրիշ պատկեր մը : Շէյքսպիրով զբաղող ընկերութիւններու սա՛ վճիռը մարդուն միտքը կուզայ թէ ան զուարճասէր դերասան մը և թատերական վարիչ մըն էր : Բայց չեմ կրնար այս իրողութիւնը լծորդել իր տաղին : Ուրիշ հիանալի մարդիկ կեանք վարած են՝ իրենց խորհուրդը կերպով մը իրենց պահելով. բայց այս մարդը, լայն հակապատկեր մըն է անոնց : Եթէ նուազ ըլլար, եթէ մեծ հեղինակներու, Պէյքընի, Միլտոնի, Թասսոյի, Սէրվանթէսի հասարակ չափին միայն հասած ըլլար, սա՛ իրողութիւնը կրնայինք մարդկային բախտին միջնադին մէջ թողուլ, թէ մարդերու այս մարդը, ան որ մտքին գիտու-

Թեան տուաւ նոր և երբեք տեսնուած լայնագոյն նիւթ մը, և մարդկութեան դրօշը տնկեց բաւական մղոններ դէպ առջ Բատին մէջ — ինք իրեն համար իմաստուն չէ եղած — թէ աշխարհի պատմութեան մէջ ամենալաւ բանաստեղծը աննշան և անարգ կեանք մը գորած է, իր հանձարը գործածելով հանրային զուարթութեան համար:

Այո՛, ուրիշ մարդիկ, քահանայ և մարգարէ, Իսրայելացի, Գերման և Շուէտացի, դիտեցին միևնոյն առարկաները, անոնք ալ այդ առարկաներուն մէջէն տեսան անոնց ներքին պարունակութիւնը: Բայց ինչ արդիւնք: Գեղեցկութիւնը ճիշտ ու ճիշտ անհետացած. կարգացին պատուիրաններ, դաժան, այլամերժ լեռնակուտակ պարտքեր, հարկեցուցիչ հանգամանք, տիրութիւն մը, կարծես կուտակադէզ լեռներէ փրթած, ինկան անոնց վրայ, և կեանքը եղաւ դիւական, անժպիտ, ուխտաւորի մը ճամբորդութիւն, փորձութիւն մը, չորս կողմէն պաշարուած Ադամական անկումի և անէծքի տիրասարսուռ պատմութիւններով, մեր ետեւը. իսկ մեր առջևը վերջին դատաստանի օրուան և քաւարանական և պատժական գեհններով. և տեսանողին սիրտը և ունկնդրողին սիրտը հաւասարապէս թախմութեամբ սուղուեցան, վհատեցան անոնց մէջ:

Պէտք է խոստովանիլ թէ ասոնք կէս — մարդոց կէս — տեսութիւններ են: Աշխարհը տակաւին կը կարօտի իր բանաստեղծ - քահանային, հաշտարարի մը, որ թատերախաղ Շէյքսպիրին հետ դուզնաքեայ բաներով չըզբաղի, ոչ ալ գերեզմաններուն մէջ դեգերի սգացող Սուէտէնպօրկի հետ, այլ տեսնէ, խօսի և գործէ, հաւասար ներշնչուեալ: Որովհետև գիտութիւնը պիտի պայծառացնէ արեւուն ճառագայթը. իրաւունքը անհատական գորովէն աւելի գեղեցիկ է. և սէրը հաշտ տիեզերական իմաստութեան հետ:



p

904

904

« Ազգային գրադարան »



NL0168480

